2023, ԱՊՐԻԼ Ա, ԹԻՎ 7 (627)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Դատգամը մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարության տոնի առիթով

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Երբ մարդու Որդին գա, արդյոք երկրի վրա հավատ կգտնի՞»
(Ղուկ. ԺԸ 8):

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփյուռս,

Այսօր համախմբված մեր եկեղեցիների հարկերի ներքո՝ փառաբանում ենք հարուցյալ Փրկչին՝ ավետելով. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Օրհնաբանում ենք հրաշափառ Հարությունը մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որ չարչարվեց, խաչվեց ու հարություն առավ, որպեսզի մեզ ազատի մեղքի ու մահվան իշխանությունից, որ աստվածային անսահման սիրով, Իր փրկագործությամբ մարդկության համար բացեց հավիտենության ու երկնքի արքայության ճանապարհը: Քրիստոս ցրեց անհուսության խավարը, հարության շնորհը պարգեւեց մարդկանց, նաեւ զորացրեց՝ երկրային այս իրականության մեջ հառնելու տառապանքներից, չարի ներգործությամբ աշխարհն ալեկոծող աղետներից ու ավերածություններից:

Քրիստոսի խաչելությունից մինչ օրս փարիսեցիական խարդավանքները, հուդայական մատնությունները, պիղատոսյան դատավարությունները արհավիրքներ են սփռում աշխարհում, աղճատում արարչաստեղծ մարդու կերպարն ու էությունը: Այսպիսի իրողությունների հանդիման, արդարեւ, նոր ուժգնությամբ է հնչում Քրիստոսի խոսքը. «Երբ մարդու Որդին գա, արդյոք երկրի վրա հավատ կգտնի՞»:

ԻԱ դարը, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, լուսավորյալ նոր դարաշրջան պիտի լիներ գիտական ձեռքբերումներով, տեխնոլոգիական մեծ նվաճումներով, մարդու կյանքի, մարդու իրավունքների ու արժանապատվության պաշտպանության միջազգային նորմերով ու օրենքներով: Բայց որքան անմեղ մարդիկ, որքան ժողովուրդներ են պատերազմների գողգոթաներում նեղությունների ու վշտերի ենթարկվում, տառապանքների խաչին գամվում՝ անարդարության, գերիշխանության մոլուցքի, խտրականության պատճառով, պայքարում գոյաբանական սպառնալիքների դեմ: Մենք եւս անցանք 44-օրյա պատերազմի, Հայաստանի սահմանների վրա հարձակումների աղետալի իրողությունների միջով: Մեր հայրենիքը ներքին եւ արտաքին մտահոգիչ մարտահրավերների պայմաններում դիմակայում է անվտանգ ու խաղաղ կյանքի ապահովման ամենօրյա փորձություններին: Հարազատ Արցախը տեւական ժամանակ շրջափակված է եւ դիմագրավում է անասելի դժվարությունների ու զրկանքների: Այս անհանգստացնող, վտանգալի երեւույթների հանդիման, մեր սրտերում

կրելով չամոքվող վիշտը մեր նահատակ, գերեվարված, անհայտ կորած ու վիրավոր զավակների, ականատես ենք նաեւ ցավալի այլ իրավիճակի, թե ինչպես են թշնամանքի, ատելության դրսեւորումները բաժանարար պատնեշներ դնում աշխարհասփյուռ մեր ժողովրդի կյանքում, խարխլում ազգային միաբանությունը: Ականատես ենք, թե ինչպես են անտեսվում դարերով նվիրագործված ավանդույթները, մեր ինքնության հիմնայունը հանդիսացող արժեհամակարգը, խաթարվում մեր ժողովրդի ազգային-հոգեւոր անվտանգությունը, որը մեծապես կարեւոր է մեր դեմ ծառացած լրջագույն մարտահրավերների հաղթահարման համար: Մեր կյանքում տեղ գտած նմանօրինակ ընթացքները, հատկապես հետպատերազմյան շրջանում, ավելի են ծանրացնում կրած վշտի ու կորուստների ցավը: Եվ այսպիսի իրադրության մեջ ամենքիս համար առավել ուժգնությամբ է հնչում Քրիստոսի հարցադրումն ու հանդիմանությունը. «Երբ մարդու Որդին գա, արդյոք երկրի վրա հավատ կգտնի՞» (Ղուկ. ԺԸ 8), «Ո՞ւր է ձեր հավատը» (Ղուկ. Ը 25):

Հիրավի, երբ պետական եւ հասարակական կյանքում արդարությունը եւ ճշմարտությունը դադարում են լինել առանցքը ձեռնարկումների ու իրագործումների, շարունակելու ենք առերեսվել պիղատոսականության դրսեւորումների: Փարիսեցիական խարդավանքները շարունակվելու են, քանի դեռ քինախնդրության եւ հիշաչարության մղումով սփռվում են զրպարտանք ու անիրավություն: Հուդայական մատնությունները շարունակվելու են, քանի դեռ չեն դադարում ուրանալ Աստծուն ու սրբությունները, արժեզրկել հայրենիքի նվիրական գաղափարը: Մինչդեռ պետությունը, հասարակությունը եւ ընտանիքը ամուր ու զորեղ են, երբ խարսխվում են աստվածադիր պատգամների, անանց արժեքների վրա, որոնք բարօրության ուղենիշ են եւ առաջնորդում են երկնային զորակցությամբ արդյունավորելու ջանքերը՝ ի խնդիր ժողովրդի ապահովության, առաջընթացի ու բարգավաճման:

Սիրելինե՛ր, հարության հավատքը հաղթանակ է փորձությունների դեմ, որին բնորոշ չեն վախի, հուսահատության, ան-

կումի ոգին, աղետաբեր դատապարտելի հաշտվողականությունը: Որքան ծանր ու անելանելի թվա ներկա իրավիճակը, այնքան ավելի զորավոր ու հաստատուն պետք է լինի մեր հավատը: Հավատքը պիտի արտահայտվի յուրաքանչյուր քայլի ու արարքի մեջ՝ անձնական, հավաքական ու համազգային անդաստանում: Հավատքով ու միաբանությամբ ենք հաղթահարել մեր պատմության ընթացքում բազմաթիվ արհավիրքներ, վերակերտել մեր անկախ պետականությունը եւ ստեղծագործ կյանք վերընձյուղել հայրենի հողի վրա: Այսօր էլ Աստծու հանդեպ, մեր ուժերի հանդեպ հավատն է, որ պիտի զորացնի մեզ՝ դուրս գալու ճգնաժամային իրավիճակներից, կառուցելու լուսավոր ապագա:

Արդ, ազգովի նորոգենք մեր հավատը մեր Փրկչի հրաշափառ Հարության տոնախմբությամբ եւ մեր կյանքով, մեր ամեն խոսքով ու գործով վկայենք մեր հավատարմությունը Քրիստոսին, վկայենք մեր նախանձախնդրությունը հանդեպ մեր տերունավանդ հավատքը եւ կերտենք հարուցյալ նոր իրականություն Քրիստոսի հետ:

Այս մաղթանքով եւ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» ավետիսով եղբայրական Մեր ողջույնն ենք հղում մեր Սուրբ Եկեղեցու նվիրապետական աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանին: Ամենայն բարյաց մաղթանքով Սուրբ Հարության հոգեպարար ավետիսն ենք բերում քույր Եկեղեցիների հոգեւոր պետերին՝ հայցելով ամենակալ Աստծու զորակցությունը քրիստոսապատվեր առաքելության արդյունավորման գործում: Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք հղում մեր Սուրբ Եկեղեցու ողջ հոգեւոր դասին եւ հավատավոր Մեր ժողովրդին ի հայրենիս եւ ի սփյուռս:

Սուրբ Հարության այս լուսաշող օրը Մեր աղոթքն ենք վերառաքում առ բարձրյալն Աստված եւ խնդրում, որ Քրիստոսի Սուրբ Հարության կենսանորոգ շնորհներով փոխակերպվի ու բարեզարդվի աշխարհը, եւ մարդկությունը երկնային զորակցությամբ հառնի տառապանքներից ու նեղություններից, հաստատի բարիք ու խաղաղություն: Հարության զորացնող ուժն ենք հայցում Փրկչից հատկապես Արցախի Մեր զավակների համար, որպեսզի խիզախ ու անկոտրում լինեն ոգով եւ արցախցուն բնորոշ ամուր եւ անհողդողդ կամքով հաղթահարեն իրենց առջեւ ծառացած բոլոր փորձությունները: Թող հարուցյալ Փրկիչն Իր շնորհներն ու ողորմությունը տարածյալ պահի հայրենի մեր երկրի՝ Հայաստանի ու Արցախի վրա եւ Իր Սուրբ Աջի հովանու ներքո ապահովության ու բարօրության մեջ պահպանի համայն մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի այսօր եւ միշտ եւ հավիտյանս. ամեն:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Ապրիլի 3-ին

Մեքսիկացի սենատորներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մեքսիկայի սենատորներ Ալեխանդրա դել Կարմեն Լեոն Գաստելումի եւ Ինդիրա Կեմպիս Մարտինեսի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ-ում Մեքսիկայի պատվավոր հյուպատոս Նիկոլայ Կոստանդյանի:

Հայոց Հայրապետը, ի դեմս սենատորների, իր երախտագիտությունը հայտնեց Մեքսիկայի Սենատին Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւի ընդունման համար: Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը բերեց սենատորներ Ալեխանդրա դել Կարմեն Լեոն Գաստելումին եւ Ինդիրա Կեմպիս Մարտինեսին Սենատում եւ միջազգային ատյաններում արցախահայության իրավունքների պաշտպանության գործում ներդրած ջանքերի համար:

Վերահիշելով հայրապետական իր այցը Մեքսիկա՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ անդրադարձավ հայկական համայնքի նկատմամբ Մեքսիկայի իշխանությունների հոգատար վերաբերմունքին, ինչը նաեւ մեծ գնահատանք է հայորդիների ծառայությանը՝ ի նպաստ Մեքսիկայի առաջընթացի:

Հանդիպմանը սենատորները, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, հաստատեցին, որ Նորին Սրբության օրհնությունն առավել պարտավորեցնող է նախանձախնդրորեն պայքարելու հանուն տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հաստատման:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ Արցախում ստեղծված հումանիտար ճգնաժամին եւ Ադրբեջանի վերահսկողության ներքո հայտնված տարածքներում Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանությանն առնչվող հարցերին:

Նորին Սրբությունը մասնավորաբար կարեւորեց Ադրբեջանի ծավալապաշտական քաղաքականության կանխարգելման, տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատման գործում միջազգային հանրության հետեւողական քայլերը:

Ապրիլի 4-ին

Խորվաթիա–Հայաստան բարեկամական խմբի պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Խորվաթիայի Հանրապետության խորհրդարանի Խորվաթիա–Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Դավոր Իվո Շտիրի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ պատգամավոր Հայկ Մամիջանյանի:

Ողջունելով հյուրերին՝ Նորին Սրբությունը կարեւորեց խորհրդարանական փոխայցելությունների միջոցով երկու երկրների բարեկամական կապերի առավել ամրապնդումը:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաեւ տարածաշրջանում առկա մարտահրավերներին, Հայաստանի սահմանների նկատմամբ ոտնձգություններին, Արցախի շրջափակմանը եւ հումանիտար ճգնաժամին, տակավին գերության մեջ պահվող հայորդիներին, ինչպես նաեւ Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված հայկական հոգեւոր, մշակութային ժառանգության պահպանման խնդիրներին: Այս առնչությամբ Ամենայն Հայոց Հայրապետը ողջունեց բարեկամ երկրների, խորհրդարանական եւ պետական գործիչների ու անհատների ջանքերը միջազգային ատյաններում արցախահայության աջակցության, ազատ եւ անկախ ապրելու իրավունքի պաշտպանության համար:

Իր հերթին բարեկամական խմբի ղեկավար Դավոր Իվո Շտիրն ընդգծեց, որ Հայաստանն ու Խորվաթիան, լինելով քրիստոնյա երկրներ, ունեն նույն արժեհամակարգը, ինչն ավելի է ամրապնդում երկու երկրների բարեկամությունը:

Պատվիրակության ղեկավարը, իր մտահոգությունները հայտնելով տարածաշրջանում տիրող իրավիճակի առնչությամբ, Նորին Սրբությանը հավաստիացրեց, որ Խորվաթիան միջազգային ատյաններում միջոցներ կձեռնարկի գերիների վերադարձման, հայկական հոգեւոր, մշակութային արժեքների պահպանման եւ տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատման ուղղությամբ:

Դոմինիկյան Հանրապետության նորանշանակ դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Դոմինիկյան Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ֆրանկ Հանս Դանենբերգ Կաստելյանոսին (նստավայրը՝ Մոսկվա):

Նորին Սրբությունը, իր օրհնությունն ու շնորհավորանքը բերելով դեսպանին նշանակման առիթով, մաղթեց արդյունավետ առաքելություն ի նպաստ հայ-դոմինիկյան հարաբերությունների ձեւավորման ու ամրապնդման:

Հանդիպմանը նորանշանակ դեսպանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց առաջիկա իր ծրագրերը՝ հատկապես կարեւորելով տնտեսական եւ զբոսաշրջության ոլորտներում համագործակցությունը:

Դեսպան Ֆրանկ Հանս Դանենբերգ Կաստելյանոսը հավաստիացրեց, որ ջանքեր կներդնի Հայաստանի հետ տարբեր ոլորտներում փոխգործակցության առավել զարգացման ու երկու պետությունների բարեկամական ջերմ հարաբերությունների զորացման ուղղությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ անդրադարձավ դեսպանի հեռանկարային ծրագրերին՝ վստահություն հայտնելով, որ դրանք կնպաստեն երկու երկրների սերտ գործակցությանը: Զրույցի ընթացքում քննարկվեցին տարածաշրջանում առկա բարդ իրավիճակին, հայ ժողովրդի առջեւ ծառացած անվտանգային հիմնախնդիրներին, Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանմանն առնչվող հարցեր:

Ապրիլի 12-ին

Երեւանի փոխքաղաքապետին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանին: Հանդիպմանն անդրադարձ կատարվեց քաղաքամայր Երեւանում Հայոց Եկեղեցու առաքելության արդյունավորմանն ի նպաստ ձեռնարկվող քայլերին, մասնավորապես եկեղեցիների ու եկեղեցական կառույցների բարվոք պահպանման եւ տարածքների բարեկարգման խնդիրներին: Այս առումով կարեւորվեց գործակցությունը քաղաքապետարանի հետ՝ ապահովելու երեւանցիների հոգեւոր կյանքի պատշաճ կազմակերպումը:

Խոսվեց նաեւ Երեւան քաղաքի առկա խնդիրների եւ զարգացման ծրագրերի մասին:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Տ. Հուսիկ աբեղ. Սմբատյանը, ազատվելով Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ասպիրանտուրայի բաժնի ղեկավարի պաշտոնից, սույն թվականի ապրիլի 1-ից նշանակվել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի փոխտեսուչ եւ գիտական խորհրդի քարտուղար:

Տ. Հովել քհն. Օհանյանը, սույն թվականի ապրիլի 1-ից ազատվելով Գեւորգյան հոգեւոր ճեմարանում ստանձնած պարտականություններից, ծառայության է կոչվել ԱՄՆ արեւելյան հայոց թեմում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցությունը զոհված զինծառայողների ընտանիքներին

Ցավով տեղեկացանք Տեղ գյուղի սահմանային հատվածում ադրբեջանական սադրանքի պատճառով ապրիլի 11-ին սկսված փոխհրաձգության մասին, որի հետեւանքով ունենք զոհեր եւ վիրավորներ:

Մեր վշտակցությունն ենք բերում մեր հերոս զավակների ծնողներին ու հարազատներին՝ աղոթելով, որ բարեգութն Աստված երկնային լուսեղեն Իր օթեւաններում խաղաղության մեջ հանգչեցնի նրանց արդար հոգիները:

Շուտափույթ ապաքինում ենք մաղթում վիրավորներին՝ հայցելով Տիրոջ հովանին եւ զորակցությունը Հայոց բանակի հրամանատարներին եւ զինվորներին:

Հայրենյաց պաշտպան մեր քաջարի զավակների սխրանքները միշտ արիությամբ կոգեշնչեն մեր ժողովրդին՝ աննկուն ոգով անառիկ ու անվտանգ պահելու տերունապարգեւ մեր հայրենիքը եւ մեր անկախ պետականությունը:

Թող հավետ օրհնությամբ ապրի արդարների հիշատակը:

Վշտակցությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ծաղկազարդի տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Ապրիլի 2-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Երուսաղեմ հաղթական մուտքի հիշատակը՝ Ծաղկազարդը: Տոնը տարիներ առաջ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հռչակվել էր Մանուկների օրհնության օր:

Այս առիթով առավոտյան ժամերգությունից հետո, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Միածնաէջ Սուրբ տաճարի շրջափակում տեղի ունեցավ Անդաստանի արարողություն եւ մանուկների օրհնության կարգ: Նորին Սրբությունն իր օրհնությունը բաշխեց Մայր Աթոռում համախմբված մանուկներին եւ ուխտավորներին:

Բերկրաշատ տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը պատարագի սրբազան արարողությանը մասնակցեց Սուրբ Գայանե վանքում: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վանորեից տեսուչ Տ. Արտակ եպս. Տիգրանյանը:

Արտակ սրբազանն իր քարոզում անդրադարձավ Մեծ պահքի կիրակիների խորհրդին՝ ի մասնավորի ընդգծելով, որ Բուն բարեկենդանից մինչեւ Ծաղկազարդ ընկած ժամանակահատվածը հրաշալի հնարավորություն է ներհայեցողաբար քննելու մեր սրտերը եւ հավատքի մեջ առավել զորացած սկսելու Ավագ շաբաթը:

Այնուհետեւ անդրադառնալով օրվա խորհրդին՝ պատարագիչ սրբազանը նշեց. «Ծաղկազարդին Երուսաղեմի ժողովուրդը քաղաքական առումով բաժանված էր մի քանի խմբի, սակայն Մեսիայի գաղափարը Երուսաղեմի բնակիչների անհատական եւ համընդհանուր շահերը մեկտեղել էր: Փարիսեցիներն ու սադուկեցիները, մաքսավորներն ու զելոտները մի կողմ էին դրել քաղաքական եւ վարդապետական տարաձայնությունները եւ եկել էին գտնելու իրենց թե՛ անհատական եւ թե՛ միասնական փրկությունը»:

Վերջում Արտակ սրբազանը ներկա հավատացյալներին հորդորեց չնմանվել Երուսաղեմի այն օրերի մարդկանց, որոնք իրենց հագուստները եւ ճյուղերը տարածեցին Տիրոջ առաջ, սակայն օրեր անց խաչեցին, այլ պատասխանատվությամբ վերցնել սեփական խաչը եւ ինքնաքննությամբ անցել Գողգոթայի ճանապարհը:

Սուրբ պատարագի ավարտին, Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ, վերստին կատարվեց մանուկների օրհնության կարգ:

Նույն օրը տոնի առիթով Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց եւ իր հայրապետական օրհնությունը բաշխեց հայաստանյան տարբեր թեմերի եկեղեցիներում սպասավորող դպիր մանուկներին եւ երգչախմբերի պատանի երգչուհիներին:

Ավագ հինգշաբթին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Ապրիլի 6-ին՝ Ավագ հինգշաբթի, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հիշատակեց մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի վերջին ընթրիքն ու Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատումը: Այս առիթով վաղ առավոտյան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Հովհաննես Մկրտիչ – Սուրբ Վարդան մատուռ-մկրտարանում կատարվեց Ապաշխարողաց կարգ:

Մայր Աթոռի միաբանությունը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Սուրբ Գայանե վանքում մասնակցեց Միջօրեի ժամերգությանն ու սուրբ պատարագին: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի լուսարար Տ. Հովհաննես քհն. Քեսաբլյանը: Պատարագի ընթացքում ընթերցվեց նաեւ Բարսեղ Կեսարացու «Սուրբ Հաղորդության մասին» ճառը:



Այնուհետեւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Մայր Աթոռի Սուրբ Տրդատի բաց խորանին կատարվեց Ոտնլվայի կարգ: Հընթացս արարողության՝ սուրբգրային ընթերցումներից հետո, Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնեց խորանի վրա դրված ջուրն ու յուղը: Ապա հոգեպարար շարականների երգակցության ներքո, Աստվածորդու օրինակով, լվաց եւ յուղով օծեց Մայր Աթոռի միաբաններ Տ. Դանիել եպս. Ֆընտըգյանի, Գարիկ սրկ. Կադեյանի, Անուշավան սրկ. Ասատրյանի, Կ. Պոլսի հայոց պատրիարքության միաբան Տ. Զատիկ վրդ. Պապիկյանի, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Զ լսարանի սան Նարեկ սրկ. Թեմուրյանի, ՀՀ ՊՆ N զորամասի ժամկետային զինծառայողներ Վռամ Աթոյանի, Սամվել Ասլանյանի, «Էօրնեկեան» հանրակրթական դպրոցի աշակերտներ Ֆելիքս Առաքելյանի, Սուրեն Մովսիսյանի, Մայր Աթոռի «Քյուրքչյան» երեխաների աջակցության կենտրոնի սան Աշոտ Ասատրյանի, ինչպես նաեւ այլ մանուկների՝ Ռոբերտ Ալիխանյանի, Ժորժ Կարայանի, Հայկ Սարգսյանի ու Լեւոն Քեսաբլյանի ոտքերը:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը Պահպանիչ աղոթքով օրհնեց ներկա բարեպաշտ ժողովրդին, որից հետո օրհնված յուղը բաժանվեց հավատացյալներին:

Սուրբ Հարության ճրագալույցի դատարագը Սուրբ Գայանե վանքում

Ապրիլի 8-ին՝ Ավագ շաբաթ երեկոյան, մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջնորդությամբ Մայր Աթոռի միաբանությունը Ճրագալույցի սուրբ պատարագին մասնակցեց Սուրբ Գայանե վանքում: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ արք. Խաչատրյանը: Մինչ սուրբ պատարագը կատարվեց Ճաշու երրորդ ժամերգությունը, ապա կարդացվեցին սուրբգրային հատվածներ, որից հետո Մայր Աթոռի չորս միաբան սարկավագներ ընթերցեցին Դանիել մարգարեի թուղթը:

Արշակ սրբազանը, իր քարոզում անդրադառնալով Սուրբ Հարության խորհրդին, ի մասնավորի նշեց. *«Շուրջ երկու հազար տարի քրիստոնյաներս Հիսուսի հետ անցնում ենք տառապանքի ճանապարհը, վերապրում Նրա չարչարանքները, խաչելությունն ու մահը եւ մասնակից դառնում Հարության ուրախությանը:*

Շատերը փորձեցին կասկածի տակ առնել մարդկության պատմության մեջ երբեւիցե տեղի ունեցած խոշորագույն այս իրադարձության, այս հրաշքի վավերականությունը՝ այն մղելով առասպելաբանության դաշտ: Քրիստոսի հարության պատմականության ժխտման փորձերը, սակայն, դատապարտվել են ձախողման, դատապարտվել են պատմական ու հնագիտական ժամանակակից հայտնագործությունների ու տվյալների անհաղթահարելի ուժով»:

Պատարագիչ սրբազանն ընդգծեց նաեւ, որ Սուրբ Հարության հրաշքը բացահայտում է մարդկային կյանքի նպատակը, հարություն առնելու հույս է պարգեւում ամենքին, վերափոխում մահախուճապ դեգերումները. «Քրիստոսի հարության հանդեպ հավատքով մարդկային կյանքը դադարում է լինել ծնունդից մինչեւ մահ ձգվող մի ժամանակամիջոց, Քրիստոսի հարությամբ երկրավոր կյանքը դառնում է պատվանդանը հավիտենական կյանքի: Այս պատճառով է, որ Քրիստոսի հարությանը հավատացողները նայում են անդին, քան մահն է, անդին, ուր ձգվում է հավիտենական կյանքը»:

Արշակ սրբազանը նաեւ հավելեց. *«Քրիստոսի հարությունն աշխատանքը վերածում է օրհնության եւ ոչ միջոցի այլոց կեղեքման, նվաստացման եւ սեփական ագահության բավարարման: Քրիստոսի հարությանը հավատացողները հայրենիքը չեն դիտարկում սոսկ որպես բնակավայր, այլ իբրեւ ինքնության սրբազան մասունք եւ աստվածասիրությունը միահյուսում են հայրենասիրությանը»*:

Վերջում սրբազան հայրը հորդորեց հավատացյալ ժողովրդին գոտեպնդվել եւ զորանալ, վանել տագնապներն ու վախերը, քանզի հույս ունենք հարության, խոստում ունենք Տիրոջից, որ անմահությունն է մեր ժառագությունը, վկայություն ունենք, որ խորտակված է մահվան զորությունը, պատգամ ունենք Տիրոջից, որ անիմաստ ու աննպատակ չէ մեր կյանքը:

Հավարտ սուրբ պատարագի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրացավ Սուրբ խորան եւ Սուրբ սեղանի կանթեղից վառեց մեր Տեր Հիսուս Քրիստոսին խորհրդանշող կենսատու մոմը, որի լույսը բաշխվեց հավատացյալներին:

Պատարագի սրբազան արարողությունից հետո Մայր Աթոռի միաբանությունը մեկտեղվեց Վեհարանում, որտեղ, նախագահությամբ Հայոց Հայրապետի, կատարվեց Սուրբ Հարության տնօրհնեք:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Սուրբ Հարության խորհուրդը

Սուրբ Հարության տոնը քրիստոնեության հիմնաքարերից է, որի վրա վեր է խոյանում մեր հավատն առ ամենակարող եւ ամենազոր Աստված: Ո՞րն է, սակայն, Սուրբ Հարության խորհուրդը, որն այնքա՜ն խորին է, որ կարողանում է հազարամյակներ շարունակ անսասանորեն կրել քրիստոնեական հավատքի ողջ բովանդակությունը:

Հարության խորհուրդն ըմբռնելու համար նախ պետք է անդրադառնալ տոնի անվան ստուգաբանությանը. «հարություն առնել» նշանակում է «վերակենդանանալ, կենդանանալ»: Սա այն իրողությունն է, երբ մահացածը դուրս է պրծնում մահվան ճիրաններից, ազատվում եւ հարություն է առնում:

Հիրավի, պատկերացնո՞ւմ եք արդյոք՝ ինչ կլիներ, եթե մեր մարդկային բնությունը դատապարտված լիներ անէանալու ու փոշիանալու սառը գերեզմանում՝ որպես վերջին հանգրվան: Ահա այստեղ է երկնային լույսն օգնության գալիս մարդուն՝ ավետելով. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց», որպեսզի մենք՝ մարդիկս, նույնպես արժանանանք այդ երանավետ ավետիսին եւ վեր ելնենք, հարություն առնենք, կենդանություն ստանանք ու մեր այսաշխարհային, մահկանացու կյանքի վաղանցուկ ծիրից անդին սավառնենք:

Արդարեւ, մարդկային միտքը չի կարող համակերպվել, որ իր գոյության ողջ իմաստն ու նպատակը միայն մի քանի տասնյակ կարճառոտ տարիներ այս աշխարհի թատերաբեմին երեւալն ու այնուհետեւ առհավետ աներեւութանալն է: Չէ՞ որ իրականում մարդն անհունի, հավիտենականության կարիքն ունի:

Աստվածային պարգեւներից մեծագույնն ու ամենասքանչելին՝ մեր կյանքը, որեւէ արժեք ու նշանակություն չէր ունենա, եթե Քրիստոս հարություն առած չլիներ. «....ի զուր կլինեին թե՛ մեր քարոզությունը եւ թե՛ քրիստոնյաների հավատը» (հմմտ. Ա Կորնթ. ԺԵ 14):

Քրիստոնեությունն այսքան խոր հիմքեր չէր գցի այս աշխարհում, եթե մենք՝ քրիստոնյաներս, չըմբռնեինք եւ ըստ արժանվույն չընդունեինք Սուրբ Հարության խորհուրդը: Չէ՞ որ այդ խորհուրդն են քարոզել Քրիստոսի առաքյալները, այդ խորհրդով են ապրել ու փրկության ճանապարհը հաղթահարել եկեղեցու սրբազան հայրերն ու հասարակ հավատացյալները: Մի՞թե Քրիստոսի սուրբ եւ հրաշափառ հարությունը չէ դրոշմված Ավետարանի ամեն մի խոսքում, Եկեղեցու յուրաքանչյուր վարդապետի ու քարոզչի ուսուցման մեջ: Երանելի Ս. Ներսես Շնորհալին նույնիսկ օրհներգության է վերածել Սուրբ Հարության խորհրդի փառաբանությունը՝ քրիստոնյաներիս եւս երգակից դարձնելով Փրկչի հարության տոնախմբությանը.

Զարթնե՛ք, դուստրե՛ր դուք Սիոնի՝
Լույսի Հարսին ավետելու,
Թե՝ «քո Փեսան, որ հարությամբ
Հաղթեց մահվանն իշխանությամբ,
Գալիս է, տե՛ս, պսակելու
Փառքո՛վ քեզ Իր,
Ուստի Նրա առա՛ջ ելիր
Պճնանքներով քո զարդերի
Ու երգելով երգը Նրա՝ Հարուցյալի,
Որ կյանք դարձավ հանուն ամեն
ննջեցյալի:

Հիրավի, Սուրբ Հարության հավատն է քրիստոնյայի կյանքի հիմքն ու ապագայի, հավիտենականության առհավատչյան. Եկեղեցու իմաստուն հայրերը, բազմաբյուր շնորհներով լցված, քրիստոնեական հավատքի հիմք են սահմանել Սուրբ Հարությունը:

Նախ՝ Հիսուս Ինքը հարություն առավ, հետեւապես «մահվամբ ոտնակոխ արեց մահը եւ Իր հարությամբ մեզ կյանք պարգեւեց»: Երկրորդ՝ չէ՞ որ մարդն ստեղծված է ըստ Աստծու պատկերի եւ Նրա նմանությամբ: Ուրեմն ինչպե՞ս կարող է մարդն Աստծու պատկերը լինել, եթե անմահ, հետեւաբար նաեւ Սուրբ Հարության ահեղ խորհրդին ենթակա չլինի: Երրորդ՝ դատե՛ք, քննե՛ք մարդու կերպարն արարչագործության ժամանակ, նայե՛ք փիլիսոփայական բոլոր տեսանկյուններից եւ միայն Հարության խորհրդի պատկերն ու հանդերձյալ կյանքի նախապատկերը կգտնեք: Չորրորդ՝ Աստված, տիեզերքի թագավորության համակ բովանդակությունն ու Տերը լինելով, միայն ու միայն սիրո՛ հաղորդակցության մեջ է Իր արարածների հետ, ուստի եւ այդ անսահման սիրով պետք է Իր մոտ, դեպի Իրեն ձգի այդ արարածներին՝ Իր իսկ շավիղներով ու ճանապարհներով, որովհետեւ Նա՛ է մահկանացուների Աստվածը: Ինքը՝ Քրիստոս, ասում է. «Աստված մեռելների Աստվածը չէ, այլ՝ ողջերի, որովհետեւ բոլորը Նրա համար կենդանի են....» (հմմտ. Ղուկ. Ի 38): Հինգերորդ՝ մի՞թե իրագործված կլիներ աստվածային կամքի ամենավսեմ խորհրդավորությունն ու ամենափառավոր նպատակը, եթե մարդիկ «ունակ» չլինեին անմահության եւ հարության, այլ ենթակա լինեին միայն անցավորին ու ժամանակավորին: Ով հավատում է աշխարհի գիտության եւ լուսավորության կատարյալ առաջադիմությանը, նա չպետք է վարանի հավատալու գիտության ամենամեծ աղբյուրին՝ Հարությանը: Եվ վերջապես, ի՞նչ եք կարծում, մի՞թե հնարավոր կլիներ հավատալ բարության ու արդարության հաղթանակին, եթե չհավատայինք բարության ամենափառավոր պսակին՝ մեռելների հարությանը:

Աստվածաշունչ մատյանը պարզեիպարզ խոսում է Սուրբ Հարության խորհրդի մասին՝ դեռեւս Հին կտակարանից սկսյալ վկայություններ փոխանցելով մեզ: Հոբ Արդարն իր տառապանքների հնոցի միջից դավանում էր. «....գիտեմ՝ հավերժական է Նա, Ով երկրի վրա պիտի փրկի ինձ՝ հարություն տալով մարմնիս....» (հմմտ. Հոբ ԺԹ 26): Դավիթը բացականչում էր Տիրոջ՝ իրեն տված խոստումը. «Քո նեղության օրը կանչի՛ր Ինձ, եւ Ես կփրկեմ քեզ, ու դու կփառաբանես Ինձ» (Սաղմ. ԽԹ 15): Իսկ Եսայի մարգարեն ուղղակիորեն ասում է. «Պիտի հառնեն ու կանգնեն մեռածները, որոնք գերեզմաններում են, եւ ուրախանալու են երկրի վրա....» (Ես. ԻԶ 19):

Առյուծների ճանկերից հրաշափառապես փրկված Դանիել մարգարեն վկայում է. «Երկրում, հողի մեջ ննջածներից շատերը հարություն պիտի առնեն՝ ոմանք հավիտենական կյանքի համար, եւ ոմանք՝ հավիտենական նախատինքի ու ամոթի համար....» (հմմտ. Դան. ԺԲ 2):

Նոր կտակարանում եւս բազմաթիվ եւ տարաբնույթ են հարությանը վերաբերող վկայությունները. «Քանզի փողը պիտի հնչի, եւ մեռելները հարություն պիտի առնեն» (Ա Կորնթ. ԺԵ 52): Եվ թե՝ «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. եթե ցորենի հատիկը հողի մեջ ընկնելով չմեռնի, միայն հատիկն ինքը կմնա, իսկ եթե մեռնի, բազում արդյունք կտա» (Հովհ. ԺԲ 24):

Այսպիսով՝ ձայնակից լինելով ավետարանիչներին ու Եկեղեցու սրբերին՝ ուրախ սրտով օրհնաբանենք մարդկության Փրկչի հրաշափառ հարությունը, որ առհավատչյան է հավիտենական կյանքի:

ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գեւորգ սրկ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Սուրբ Հարություն

Տիրոջ հրեշտակն այսօր ուրախ
Ձայնով երգեց փառքը Աստծու,
Քրիստոս հարյավ, ու ամեն վախ
Դարձավ ժպիտ հույսի, սիրո…

Մի մեծ գարուն այսօր բացվեց
Քրիստոսի սուրբ, լույս Հարությամբ,
Աստված մահվամբ մահին հաղթեց
Ու Կյանք դարձավ մեզ փրկությամբ:

Այսօր ծագեց անճառապես
Լույսը բարի՝ Քրիստոս Աստված,
Այսօր լույսով սուրբ ողողվեց
Ո՞ղջ աշխարհը համատարած:

Երկինքն այսօր ուրախացած
Բացում է իր դռները գոց,
Քանզի մահին հաղթեց Աստված,
Քրիստոս հարյավ ի մեռելոց…

✠ ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԴՐՎԱԳՆԵՐ

Մկրտիչ Ա Վանեցու հայրապետության շրջան (1892–1907 թթ.)

1897 թ. սեպտեմբերի 14-ին՝ Խաչվերացի տոնին, ձեռամբ Մկրտիչ Ա Վանեցի հայրապետի (1892—1907 թթ.) կատարվում է ԺԹ դարի վերջին մյուռոնօրհնությունը: Թեպետ մյուռոնի օրհնությունը պետք է կատարվեր 1896 թ. սեպտեմբեի 29-ին, սակայն համիդյան կոտորածների պատճառով այն հետաձգվեց (*Կ. Տէր-Մկրտչեան,* Սուրբ միւռոնի օրհնութիւնը, Ս. Էջմիածին, 2008, էջ 23): Հետաձգման պատճառներից մեկն էլ, ինչպես նշվում է «Արարատ» ամսագրում, Մայր տաճարի ներքին նորոգությունն էր (Ս. միւռոնի օրհնութիւնը, «Արարատ», 1897, էջ 368): Պաշտոնական ծանուցում չէր եղել, բայց եւ այնպես ուխտավորների մեծ բազմություն էր ժողովվել Ալեքսանդրապոլից, Ղարսի եւ Ախալցխայի գավառներից, ինչպես նաեւ այլ վայրերից: Մայր Աթոռի հյուրատանը, միաբանության նոր շինության սենյակներում եւ մոտ քառասուն զինվորական վրաններում տեղավորվել էր ուխտավորների մի մասը, իսկ մնացյալը՝ Վաղարշապատի գյուղերում, ոմանք էլ՝ բաց երկնքի տակ: Համաձայն «Արարատ» ամսագրի տեղեկությունների՝ մյուռոնօրհնության օրը վանքի բակը լի էր ամեն կողմից եկած ուխտավորներով. կարելի էր լսել Հայոց բոլոր բարբառները եւ Կովկասի բոլոր լեզուները (Սուրբ միւռոնօրհնութեան հանդէսը, «Արարատ», 1897, էջ 389): Սուրբ պատարագից եւ մյուռոնօրհնությունից հետո վեհարանում հյուրասիրություն էր կազմակերպված պատվավոր հյուրերի համար, իսկ միաբանական սեղանատանը՝ ժողովրդի համար: Երեկոյան զինվորները նվագում էին, եւ նրանց հետ մրցում էին աշուղները՝ իրենց ազգային-ժողովրդական երգերով: Երեք օր շարունակ Մայր տաճարը լի էր ուխտավորներով. նրանք ամեն ջանք գործադրում էին, որ երկար ճանապարհ անցնելուց հետո գոնե մեկ անգամ կարողանան համբուրել սրբալույս մյուռոնի կաթսան:

1903 թ. օգոստոսի 24-ին Մկրտիչ Ա Վանեցին կատարում է մյուռոնի հանդիսավոր օրհնություն: Այս ժամանակ է ընդունվում նաեւ ցարական կառավարության՝ Հայոց Եկեղեցու գույքի բռնագրավման որոշումը



(*Կ. Տէր-Մկրտչեան,* Սուրբ միւռոնի օրհնութիւնը, էջ 23): Նախապես որոշվել էր օրհնությունը կատարել սեպտեմբերի 28-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնին (Սրբալույս միւռոնի օրհնութիւն, «Արարատ», 1903, էջ 579): Իշխանությունները, զգուշանալով, որ ուխտավորների մեծ համախումբը կարող է վերածվել հակացարական հուժկու ցույցի, Կովկասի ժամանակի փոխարքա Գոլիցինի միջոցով օգոստոս ամսին հրահանգում են մյուռոնի օրհնությունը հետաձգել: Սակայն Խրիմյան Հայրիկը հանդիսավոր արարողությունը կատարում է հենց օգոստոս ամսին: Այս մյուռոնօրհնությանը ուխտավորներ էին եկել միայն ամենամոտ գյուղերից, իսկ հեռավոր բնակավայրերի հավատավոր հայորդիները մասնավոր գրություններով շնորհավորում էին եկեղեցական այս նշանակալի արարողության առիթով: Վեհափառ հայրապետի հրավերով Մայր Աթոռ էին եկել Երեւանի փոխանորդը, Աստրախանի, Վրաստանի, Ղարաբաղի, Շամախիի եւ Բեսարաբիայի վիճակների առաջնորդները, Կարսի, Ալեքսանդրապոլի, Ախալցխայի, Հին Նախիջեւանի, Նոր Նախիջեւանի փոխանորդները, Սանահինի ու Տաթեւի վանահայրերը:

Արամայիս սրկ. ԱԶԻԶՅԱՆ



Քրիստոսի գալստյան սպասումով

«Երանի՜ երկինքը ճեղքեիր
եւ ցած իջնեիր»
(Եսայի ԿԴ 1):

Մեծ պահքի վեցերորդ կիրակին կոչվում է «Գալստյան կիրակի»: Այն ավետում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի առաջին գալուստը եւ հիշեցնում երկրորդ՝ փառահեղ գալստյան մասին: Ուշագրավ է, որ մնացյալ եկեղեցիները եւս ունեն «Գալստյան» անվամբ կիրակի, որը, սակայն, նրանց տոնացույցի այլ հատվածում է զետեղված:

Մեծ պահքի վերջին այս կիրակին «Գալստյան» կոչելով՝ Եկեղեցին նախ ավետում է Փրկչի առաջին գալուստը, այսինքն՝ ճշմարիտ մարդեղությունը՝ միաժամանակ հիշեցնելով ավետարանական անբեկանելի ճշմարտությունը, թե մարդու վերականգնումը եղավ Քրիստոսի առաջին գալստյամբ, որով մարդկության համար աստվածային փրկագործությունն իր լրումին հասավ: Հիրավի, վեցերորդ կիրակիի խորհուրդը մեծանում եւ համապարփակ նշանակություն է ստանում, քանի որ այն վերարթնացնում է Տիրոջ առաջին գալստյան սուրբ հիշողությունը, ինչպես հաստատում է օրվա շարականը, ապա՝ նորոգում Տիրոջ երկրորդ գալստյան հույսը:

Ի վեցերորդ աւուր զԱդամ
Ստեղծեր ի տիպ քո տիրական,
Որ ոչ պահեալ զպատուիրանն՝
Մերկացաւ զպատմուճանն.
Իսկ նոր Ադամդ ի վեց դարուն
Այց արարեր կորուսելոյն.
Տո՛ւր մեզ, Փրկիչ, ողորմութիւն
Եւ զմեղաց զթողութիւն:

Տիրոջ առաջին գալուստը լռության մեջ եղավ՝ առանց ոտնաձայների, բայց մեծ խաղաղության ավետիսով եւ հրեշտակային ձայնակցությամբ. «Փա՛ռք Աստծուն բարձունքներում, եւ երկրի վրա խաղաղություն եւ հաճություն մարդկանց մեջ» (Ղուկ. Բ 14): Մինչդեռ երկրորդ գալուստը լինելու է փառահեղ՝ լուսեղեն ամպով, հրեղեն կառքով, չորեքկերպյան աթոռով ու բարկությամբ. «Մեր Աստվածը պիտի գա հայտնապես, եւ մեր Աստվածը պիտի չլռի, Նրա առջեւ հուր պիտի բորբոքվի, եւ Նրա շուրջը՝ սաստիկ մրրիկ» (Սաղմ. ԽԹ 3):

Քրիստոսի առաջին գալուստն սկիզբ առավ մարդեղության խորհրդով եւ իր լրումին հասավ խաչելությամբ, երկրային կյանքի ավարտով եւ հրաշափառ հարությամբ: Այն կատարվեց իբրեւ Սուրբ Գրքում խոստացված Մեսիայի հայտնություն: «Մեսիան» Հին կտակարանի մարգարեների կանխասած եւ բոլորի ակնկալած Փրկիչն է: Աստվածադիր այս ճշմարտությունը Հիսուս Իր քարոզչության սկզբնական շրջանում ծածուկ պահեց, բայց վերջին հանգրվանում այն հայտնեց թե՛ աշակերտներին եւ թե՛ հրեա ողջ հանրությանը: Այսպես՝ Տիրոջ անմեկնելի տնօրինությունների շնորհիվ կատարվեց անշրջելի մի իրողություն. կորուսյալ մարդկությանը հնարավորություն ընձեռվեց կրկին վերադառնալու Աստծու ապահով գիրկը եւ վայելելու Նրա անսպառ ներկայությունը: Միայն քրիստոնեությունն ունի այն մեծագույն խորհուրդը, որ աշխարհի Արարիչը, Կենսատուն եւ Փրկիչը սրբազան նախախնամությամբ մարմին առավ, խաչվեց եւ չարչարվեց Իր իսկ ստեղծածի համար՝ վերստին նորոգելով անկյալ արարածներին: Սա ո՛չ թե Արարիչ եւ արարված, այլ Հայր եւ կորուսյալ որդի հարաբերություն է: Հետեւապես մենք՝ որպես շնորհի որդիներ, պետք է միշտ հայենք մեր հոգատար Հորը եւ ջանանք չկորցնել Նրա սերն ու խնամքը:

Քրիստոսի երկրորդ գալստյան օրն անհայտ է մարդկությանը. «....այդ օրվա եւ ժամի մասին ոչ ոք չգիտի. ո՛չ երկնքի հրեշտակները եւ ո՛չ էլ Որդին, այլ միայն Հայրը» (Մատթ. ԻԴ 36): Սակայն մինչ Քրիստոսի երկրորդ գալուստը պետք է գա նեռը, նա թլփատությամբ պետք է հետեւի Մովսեսի օրենքին ու մոլորեցնի մարդկանց՝ հայտնելով, թե ինքն է ճշմարիտ Քրիստոսը՝ Օծյալը. շատերը նրան պիտի հավատան, բայց միայն սրտով մաքուրները կկարողանան գտնել ու տեսնել կենաց Լույսը՝ Աստծուն. «Երանի՜ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետեւ նրանք Աստծուն պիտի տեսնեն» (Մատթ. Ե 8):

Թեեւ Հիսուս չի հայտնում մեզ, թե երբ պետք է տեղի ունենա Իր գալուստը, սակայն պարզաբանում է, թե ինչ՞ր պետք է պատահեն նախքան Իր ահեղ դատաստանը: Հիսուսի երկրորդ գալստից առաջ, համաձայն Ավետարանի, տագնապներ, կործանումներ ու ավերածություններ կլինեն: Նախ երեւան կգան «սուտ մարգարեներ», որոնք կքարոզեն եւ կհայտարարեն, թե իրենք են Քրիստոս եւ շատերին կմոլորեցնեն: Նրանց ծուղակից ազատվողները Քրիստոսի թշնամիներից կհալածվեն. «.... ձեզ նեղության պիտի մատնեն եւ պիտի սպանեն ձեզ. եւ իմ անվան պատճառով բոլոր ազգերի կողմից ատելի պիտի լինեք.... Եվ անօրինության շատանալուց՝ շատերի սերը պիտի ցամաքի....» (Մատթ. ԻԴ 9–12): Հիսուս զգուշացնում է նաեւ, որ այդ ժամանակ պատերազմներ ու սարսափելի արհավիրքներ կլինեն, եւ «ազգը ազգի դեմ պիտի ելնի.... եւ պիտի լինեն սով, համաճարակ ու երկրաշարժեր» (հմմտ. Մատթ. ԻԴ 6–7): Եվ վերջապես՝ տիեզերքի անդորրը կխանգարվի, եւ վերտիեզերական իրադարձություն կլինի. «....արեգակը պիտի խավարի, եւ լուսինն իր լույսը չպիտի տա, եւ աստղերը երկնքից պիտի ընկնեն, ու երկնքի զորություններ պիտի շարժվեն» (Մատթ ԻԴ 29): Այսպես աշխարհը տակնուվրա կլինի, եւ կշրջվի ամեն ինչ (հմմտ. Մատթ. ԻԴ 3–31): Փրկչի անպատմելի գալստյամբ կբացվի երկինքը, Նրա ահից կսասանվեն ու կհալվեն լեռները, ինչպես մոմը կրակից (Ես. ԿԴ 1): Երկինքը շառաչյունով կանցնի ու կչքանա, հրով կիզված տարրերը կլուծվեն, եւ երկիրն ու ամեն գործեր, որ կան նրա վրա, հայտնի կդառնան (հմմտ. Բ Պետ. Գ 10): Տերը կգա փողի ազդարարող ձայնով, եւ ինչպես փայլակի լույսն է հալածում խավարը, այդպես էլ Տիրոջ լույսը կհալածի մարդկային մեղքի ստվերը: Տիրոջ գալստյամբ Սուրբ խաչը՝ իբրեւ հաղթության նշան, տեսանելի կլինի, եւ ապա Խաչյալը կհայտնվի:

Սա մարդկության պատմության վերջը չէ, այլ ամփոփումն ու շարունակությունն է նոր կյանքի եւ նոր աշխարհի. երկնային բոլոր զորությունները կհալվեն, երկինքը մաղաթի պես կգալարվի, եւ կլինեն նոր երկինք ու նոր երկիր (հմմտ. Ես. ԼԴ 4):

Հիսուս կգա Իր սուրբ Եկեղեցու հետեւից. մի իրադարձություն, որը սովորաբար կոչվում է «հափշտակություն»: Այդ ժամանակ ի Քրիստոս մահացածները հարություն կառնեն, իսկ կենդանի քրիստոնյաները կհափշտակվեն ու կհանդիպեն Տիրոջը՝ Նրա հետ ընդմիշտ լինելու համար:

Եկեղեցու հափշտակությունից հետո քրիստոնյաները կկանգնեն Քրիստոսի ահեղ դատաստանի առջեւ. «Սակայն Հայրը ոչ մեկին չի դատում, այլ ամեն դատաստան տվել է Իր Որդուն, որպեսզի ամենքը պատվեն Որդուն, ինչպես պատվում են Հորը» (Հովհ. Ե 22–23): Անաչառ Դատավորը կդատի բոլորին՝ ըստ իրենց կատարած գործերի: Սա, անշուշտ, դատավճիռ չէ՝ որոշելու նրանց փրկությունը, այլ վարձատրություն բոլոր նրանց համար, ովքեր ուրացել են իրենց անձերը, վերցրել սեփական չարչարանաց խաչն ու քայլել դեպի Քրիստոս: Սատանան եւ նրա թագավորությունը կջախջախվեն: Վերջին օրը ողորմության գետի փոխարեն, անտարակույս, կհոսի արդարության գետը, որից դժոխքի լիճն է գոյանալու: Եվ բոլոր նրանք, ովքեր մերժեցին եւ անարգեցին Աստծու խոսքը, կհատուցեն ու կդատվեն՝ հեռանալով մի վայր, որտեղ կկրեն վերջնական եւ հավիտենական պատիժը. «Նրա առջեւից հուր կընթանա՝ այրելով Իր շուրջ եղող թշնամիներին....» (Սաղմ. ՂԶ 3): Եվ Տերն աշխարհի բոլոր կողմերից կհավաքի իր սուրբ ժողովրդին, որը կկազմի Քրիստոսի մարմինը՝ Աստծու ընտրյալ Եկեղեցին: Կլինի նոր Երուսաղեմ, եւ Աստծու հավիտենական ներկայությունը կհեղվի բոլոր փրկագնվածների վրա:

Ուստի Մեծի պահոց այս ճամփորդության մեջ Փրկիչն ուզում է, որ մեր առջեւ մշտապես ունենանք այս երկու գալուստների սքանչելի պատկերները: Աստված ցանկանում է, որ մենք, մեր անձերը սուրբ պահելով, պատրաստվենք համայն մարդկության մեծագույն իրադարձությանը՝ Փրկչի վերադարձին եւ արդար դատաստանին: Մենք՝ ճշմարիտ քրիստոնյաներս, պետք է խորհրդածենք մեր հին ու նոր մեղքերի մասին, հին կյանքի եւ գալիք թագավորության մասին: Ժամանակն է, որ ուրանանք ինքներս մեզ եւ վերահիմնադրված կյանքով հարություն առնենք՝ ի պատրաստություն հավերժականի հետ հանդիպման: Ա դարի քրիստոնյաները հարատեւում էին այդ սպասման մեջ: «Մարանաթա» բառը մշտապես նրանց շուրթերին էր. այն արամերենից թարգմանաբար նշանակում է «Եկ, Տէր»: Ահա Աստվածաշունչը եզրափակվում է այս բառերով. «Եկ, Տեր Հիսուս Քրիստոս» (Հայտն. ԻԲ 20): «Մարանաթան» վաղ շրջանի քրիստոնյաների համար ավելին էր, քան պարզ ցանկությունը, ավելի՝ քան նույնիսկ աղոթքը: Այն կենսակերպ էր, որով առաջին քրիստոնյաներն ապրում էին իրենց հավատքը՝ խոնարհաբար եւ անսահման համբերությամբ սպասելով Տիրոջ վերադարձին. «....եւ ակնդետ սպասենք երանելի հույսին եւ փառքի հայտնությանը մեծն Աստծու եւ մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի» (Տիտ. Բ 13):

Առաջին գալստյան ժամանակ մեր Տեր Հիսուս Քրիստոս խոնարհվեց մսուրի մեջ եւ հանձն առավ խաչելության անարգ մահը, բայց Նա կրկին պետք է վերադառնա՝ այս անգամ ահեղ զորությամբ ու մեծ փառքով: Մենք այս երկու գալուստների հանգրվանում ենք՝ ապրելով առաջին գալստյան ուրախությունը եւ սպասելով երկրորդ գալստյանը: Մեծ պահքի կիրակիների իմաստալից ոսկե շղթան փակվում է՝ բացելով հույսի ճանապարհը դեպի մշտնջենավոր Աստծու օթեւանը:

Եթե առաջին գալուստը Աստծու ինքնազոհաբերությունը եղավ մարդկության փրկության համար, ապա երկրորդը լինելու է այդ զոհաբերման պտուղները քաղելու եւ այն Աստծու շտեմարանում հավաքելու ժամանակաշրջանը: Այսու ջանանք բարի պտուղներ պատրաստել Նրա համար, Ով եկավ մեզնից մեկը դառնալու, մեզ հետ ապրելու եւ չարչարակից լինելու. «Համբերե՛ք եւ դուք, ամրացրե՛ք ձեր սրտերը, քանի որ Տիրոջ գալուստը մոտ է» (Հակ. Ե 8):

Հայկ սրկ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ելենա ԱՂԱԽԱՆՅԱՆ

Շարական Գալստյան կիրակիի

Որ զխորհուրդ Քո գալստեանդ
Յառաջագոյն գուշակեցեր
Մարգարէիւքն Իսրայէլի,
Զորս ընտրեցեր յետ Մովսէսի,
Որք խօսեցան Հոգւով սրբով
Բազմապատիկ օրինակօք.
Տո՛ւր մեզ, Փրկիչ, ողորմութիւն
Եւ զմեղաց զթողութիւն:

Ի մերձենալ ամաց վերջին,
Զոր տեսանողքն ծանուցին,
Զհասանիլ մեր Փրկողիդ
Առ ի վախճան ժամանակին,
Երեւեցար ի մէջ մարդկան՝
Զգեցեալ զկերպ ծառայական.
Տո՛ւր մեզ, Փրկիչ, ողորմութիւն
Եւ զմեղաց զթողութիւն:

Ի վեցերորդ աւուր զԱդամ
Ստեղծեր ի տիպ քո տիրական,
Որ ոչ պահեալ զպատուիրանն՝
Մերկացաւ զպատմուճանն.
Իսկ նոր Ադամդ ի վեց դարուն
Այց արարեր կորուսելոյն.
Տո՛ւր մեզ, Փրկիչ, ողորմութիւն
Եւ զմեղաց զթողութիւն:

Տաճար Լուսոյ անստուերին
Եւ առագաստ անճառ Բանին,
Որ զնախնւոյ մօրն Եւայի
Բարձեր զանէծսն տրտմալի,
Հայցեա՛ յՈրդւոյ քո Միածնի՝
Հօր հաշտութեանն միջնորդի,
Բառնալ ի մէնջ զխռովութիւն
Եւ տալ զոգւոց խաղաղութիւն:

Հովհաննես Տրապիզոնցի վարդապետի «Թուղթը» սրբալույս մյուռոնի հրաշագործության մասին

Ստորեւ ընթերցողին ենք ներկայացնում Հովհաննես Տրապիզոնցի վարդապետի «Թուղթը»՝ ուղղված Հակոբ Ե Շամախեցի կաթողիկոսին (1759–1763 թթ.): «Թուղթը» գրվել է Բենգալիայի Սեյդաբադ քաղաքում 1763 թվականին: Հեղինակը պատմում է արկածներով լի մի նավագնացության մասին՝ ներկայացնելով իր ուղեւորության Սուրաթ–Բենգալիա ճանապարհային հատվածի ուշագրավ մանրամասները: Նամակն ուշ-միջնադարյան հայկական ուղեգրապատումի մի հետաքրքիր նմուշ է, որը համասեռ գրվածքների մեջ առանձնանում է նախ եւ առաջ իր պատկերման նյութով: Հովհաննես վարդապետ Տրապիզոնցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան էր՝ իբրեւ նվիրակ ծառայության նշանակված Հնդկաստանի հայաշատ բնակավայրերում: Ներկա գտնվելով ենթադրաբար 1762 թվականի մյուռոնօրհնությանը՝ Հակոբ Ե Շամախեցի հայրապետից ստանում է սրբալույս մյուռոնի մի մասը՝ Հնդկաց երկիր տանելու համար: Թեպետ Նամակը գրվել է որպես հաշվետվություն կամ զեկույց՝ հասցեագրված կաթողիկոսին, բայց ստացվել է գեղարվեստական որոշակի արժանիք ունեցող մի գրական ստեղծագործություն:

Սույն բնագրի արեւելահայերեն փոխադրությունը կատարել ենք Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Հմր 618 ձեռագրից, որի գրիչը Եփրեմ աբեղան է: Հետաքրքրություն առաջացնող որոշ հատվածներ, որոնք հիշյալ ընդօրինակողը բաց է թողել, փոխադրել ենք՝ վերցնելով «Բազմավէպի» երկու տարբեր հրատարակություններից՝ արված վենետիկյան ձեռագրերից: Դրանք դրել ենք ուղիղ գրությամբ:

Հնդկաց կողմերի նվիրակ Տրապիզոնցի Հովհաննես վարդապետի նամակը՝ գրված Շամախեցի Հակոբ կաթողիկոսին, եւ որի ձեռագրից ես՝ Եփրեմ աբեղաս, այստեղ օրինակեցի:

Աստվածընտիր եւ սրբազնակատար Տեր Հակոբի՝ Ամենայն Հայոց վեհապետի սուրբ գարշապարներիդ երկրպագություն եմ մատուցում անհագ իղձերով եւ հրակեզ սիրով:

Այս է մեր պատմությունն այն դեպքերի մասին, որ մեզ պատահեցին թե՛ ծովի մեջ եւ թե՛ ցամաքում:

Եվ այժմ բազում խոնարհությամբ ու շնորհալուր խոսքերով սկսում եմ համառոտաբար մեկ առ մեկ պատմել [մեր գլխին] եկած բոլոր դեպքերը: Արդ [այն մասին], թե ինչպիսի բազմադեմ վշտեր ու նեղություններ եւ կամ ինչպիսի մահառիթ վտանգներ ու սարսռելի պատուհասներ եւ ձախողակ փորձություններ [պատահեցին], որ եկան-պատեցին մեզ ամեն կողմից եւ կուտակվեցին մեր գլխին մեր ծովացած հանցանքների պատճառով, եւ կամ վերջապես՝ ինչպես ազատվեցինք նորահրաշ սքանչելիքով եւ բարերար Աստծու ամենախնամ գթությամբ... Քանզի Հայոց ՌՄԺԱ (1762) թվականին եւ հունվար ամսի Ի (20)-ին դուրս եկանք Բասրա քաղաքից եւ ամեն պատրաստությամբ մտանք *սալեհ չալապի* (հեղինակը որոշ անուններ գրել է փոքրատառով՝ այդպիսով ցույց տալով իր վերաբերմունքը տվյալ անձի նկատմամբ. մենք պահպանել ենք գրության այս ձեւը՝ այդ անունները նշելով շեղատառ) անվամբ քրդի նավը եւ Աստծու հաջողությամբ գնալով՝ հասանք Հնդկաստանի ամենամոտ քաղաքը՝ Պանտար Սուրաթ, որը վերոգրյալ թվին էր եւ մարտի ԺԲ (12)-ին, եւ այնտեղ կատարեցինք Սուրբ Հարության՝ Զատկի մեծահանդես տոնը, եւ Սուրբ Զատկից ԺԵ (15) օր անց՝ [մինչեւ] ապրիլ ամսի ԻԴ (24)-ը, մեր նվիրակության բոլոր գործերն այնտեղ կատարեցինք ու ավարտեցինք: Եվ ապա ելանք Սուրաթից նույն ապրիլ ամսի ԻԴ (24)-ին եւ մտանք *մջրի* պիղծ անունով ոմն կրակապաշտի նավը, որով կամենում էինք գնալ Բենգալիա՝ Հնդկաց երկրի ծովի մյուս կողմը, Կալկաթա կոչվող նավահանգստային մեծ քաղաքը, ուր բազմաթիվ հայազգիներ կային: Եվ Կ (60) օր ճանապարհ անցանք անհուն ծովի միջով, «երբ մերձեցանք Կալկաթա քաղաքին, սակայն գետաբերանը չէր երեւում, քանի որ [գետը] ծովին էր խառնվել անձրեւների ուժեղ հեղման եւ մառախլապատ ամպերի պատճառով» («Բազմավէպ», 1883, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր, էջ 341–342), եւ սաստիկ ալեկոծությունների ու մրրիկների, նաեւ անձրեւների հեղեղման ու հողմերի ուժգին շաչյունի եւ ամպերի ու կայծակների բախման [պատճառով] տգետ ու հիմար նավավարները, որոնք մահմեդականներ էին, իսպառ մոլորվեցին եւ թիավարելով շեղվեցին՝ չկարողանալով գտնել Կալկաթա քաղաքի ճիշտ ճանապարհը: Այնպես շեղեցին նավը, որ անցան-գնացին ՉԵ (300) մղոնի չափ, «իբրեւ թե կամենում էին դեպի ծովախորքը գնալ՝ նավը խորտակումից փրկելու համար, քանի որ այնտեղ ծովի ջուրն ավելի խորը չէր: Եվ դրա համար նավաստիները կամենում էին նավը հեռացնել դեպի [բաց] ծով, որպեսզի չխորտակվեր նավը, բայց» (անդ, էջ 342) բոլորովին չգիտեին իրենց ուր գնալը եւ կամ որտեղ գտնվելը:

Իսկ նավը ուժգին հողմերի շաչյունի եւ մրրկածուփ ալեկոծությունների սաստկության [պատճառով] հանկարծակի իր ներքին կողմով զարկվեց հատակին: Ղեկը, իսկույն ընկնելով, խորտակվեց: Եվ նավն ընկղմվելով նստեց ավազի վրա: Նավի բոլոր շինվածքները խախտվելով թուլացան, ու որոշ տախտակներ իրենց տեղերից [դուրս] ընկան: Շուտով նավը լցվեց ջրով եւ հավասարվեց ծովին:

Բայց հեռվից երեւում էր անմարդաբնակ եւ ամայի ցամաքը, քանզի նավը ցամաքից նույնքան էր հեռու, որքան Սուրբ Աթոռից մինչեւ Երեւան քաղաքն է: Եվ ԲԵ (300)-ից ավելի անձ կար նավի մեջ. ԺԳ (13) հոգի հայոց ազգից էինք՝ թե՛ տղամարդ եւ թե՛ կին, իսկ մնացածը՝ մահմեդականներ եւ կռապաշտներ՝ հնդիկներ, նաեւ բուն ֆռանկներ՝ պորտուգալացի ազգից:

Եվ երբ այսպիսի վտանգի հանդիպեց նավը, ինչ որ կար նավի մեջ՝ թե՛ ուտելիք եւ թե՛ ճանապարհի այլ պաշարներ ու բեռներ, ամենը մրրկածուփ ալիքներն ընկղմեցին ծովի խորքը: Այնժամ բոլորս սկսեցինք լաց լինել, բղավել, հառաչելով ճչալ եւ բարձրաձայն աղաղակել բարերար Աստծուն, որ վերցնի մեզնից իր ցասումը: Նույն ժամին մեր ազգից Բ (2) կին ծովում խեղդամահ եղան, միեւնույն ժամանակ ծովն ընկղմվեց նաեւ մեր սնդուկը, իսկ սրբալույս մյուռոնը եւ մեր բոլոր գրքերն ու էլի շատ ուրիշ իրեր սնդուկի մեջ էին, նաեւ կոնդակները եւ ճանապարհի մեր ողջ պաշարն ընկղմվեցին ծովի խորքը. ո՜հ ավաղ հոգուս՝ այս ամենը եւ մանավանդ սրբալույս մյուռոնի ծովն ընկնելը մեր աչքով տեսնելով՝ այնժամ մեր հույսն իսպառ մարեց եւ վայ ասացինք մեր ողորմելի անձերին:

Իսկ ծովի ալիքներն ավելի ու ավելի էին սաստկանում, բայց նույն թշվառ ժամին Ժ (10) նավավարներ եւ մի հայազգի երեցի տղա շուտափույթ մտան մի փոքր նավակի մեջ եւ փախուստի դիմելով՝ դուրս ելան ցամաք՝ ապրեցնելով իրենց անձերը խեղդվելուց, բայց մեզ իսկույն մոռացան եւ երբեք չկամեցան փրկել ու ազատել մեզ խեղդվելուց եւ կամ օգնության հասնել:

Նույնպես եւ մնացյալ բազմաթիվ մարդիկ, որ նավի մեջ էին, թե՛ քրդերը, թե՛ կռապաշտները ժողովվեցին մի տեղում եւ առագաստից կապված բոլոր ձողերն ու մյուս գերաններն արձակելով՝ մի տեղում հավաքեցին եւ բոլորն իրար կապեցին հաստ ու ստվար պարանով: Եվ ապա իրենք՝ նավավարները եւ նավազները, որոնք Խ (10) հոգի էին՝ մահմեդականներ, նստեցին կապված գերաններին, եւ ծովի ալիքները նրանց տարան ու ափ հանեցին, իսկ մենք՝ քրիստոնյաներս, նույնպես բազում ջանքերով կամենում էինք գնալ նրանց հետ: Թեպետ շատ աղաչեցինք ու պաղատեցինք նրանց, սակայն այդ անօրենները թույլ չտվեցին մեզ գնալ իրենց հետ, քանզի նրանք բազմաթիվ էին, իսկ մենք՝ սակավ: Ի՞նչ կարող էինք անել: Բացի այդ՝ ամեն օր Զ (6) մարդ կամ Ե (5) մարդ եւ կամ Դ (4) մարդ, միասին ելնելով տախտակների վրա, ցամաք դուրս եկան. բայց մենք՝ ողորմելի անճարակներս, ԺԷ (17) օր քաղցած եւ անսնունդ մնացինք նավի մեջ՝ որպես վերջին թշվառականներ, որոնցից Ե (5) հոգիս հայազգի էինք, իսկ մնացյալներից Զ (6)-ը մահմեդականներ էին, եւ Դ (4)-ը՝ բուն ֆռանկներ՝ պորտուգալացի կոչվող ազգից: Իսկ ԺԷ (17) օր անց՝ Վարդավառի բարեկենդանի կիրակի օրվա ինն-երորդ ժամին, ուժգին հողմերի շաչյունից եւ ամպերի բախումից ու կայծակների փայլատակումից եւ հորդառատ անձրեւների տեղումից ծովի ալիքները խիստ սաստկացան, եւ այնժամ նավն սկսեց իսպառ խարխլվել ու խորտակվել: Եվ նույն ժամին իսկույն բաժանվեց բազում մասերի: Եվ մենք, սրտատոչոր սպասելով, աղիողորմ արտասուքներով լալիս էինք եւ կանգնելով դապուսի՝ մեծ նավախցի տանիքին՝ այդժամ արտասվալից հառաչանքով աղաղակելով հիշում էինք ողորմության Մորը՝ ամենաօրհնյալ Սուրբ Աստվածածնին: Նաեւ ջերմ հավատով հուսացինք մեր Տեր Հիսուս Քրիստոսին եւ ապավինեցինք Նրա ամենագութ ողորմությանը: Եվ նույն ժամին այդ մեծ նավախցի տանիքը, որի վրա մենք կանգնած էինք, խնամքով եւ մեր Տեր Հիսուսի շնորհիվ ամբողջությամբ բաժանվելով իր տեղից, մեզ առավ-տարավ եւ կեսգիշերային ժամին ցամաք հանեց: Եվ երբ Աստծու շնորհիվ ազատվեցինք ծովից եւ ցամաք ելանք, այնժամ ընկնելով մեր երեսների վրա՝ երկրպագություն եւ փառք մատուցեցինք Ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն՝ բազում գոհունակությամբ:

Արդ մենք ԺԵ (15) հոգի էինք, որ փրկվեցինք ծովից, սակայն հայազգի Ե (5) հոգուն [առանձին] եմ հիշատակում՝ գրելով նրանց անունները. նախ ես՝ անարժանս, եւ մեր տեր Հուսեփը եւ Բ (2) նորահաս կույս աղջիկները, որոնք խոջա Մինասյանց լուսահոգի Գրիգոր աղայի դուստրերն էին, եւ Ա (1) ղարսեցի սպասավոր տղա, իսկ մյուսները ֆռանկներ ու թուրքեր էին:

Սակայն մեր ազատվելուց երկու օր հետո՝ Վարդավառի շաբաթապասի երեքշաբթի օրը՝ առավոտ ծեգին, անսպասելի գտանք սրբալույս մյուռոնն իր ամբողջական ամանով եւ արտաքուստ՝ ցանցով կապված ու զմուռսով կնքված. ինչպես որ նախապես եղել էր, այդպես անարատ էլ գտանք: Եվ այդ օրը նույն ժամին մեր ապրած ցնծության մասին գրով երբեք չեմ կարող պատմել, քանզի նույն սնդուկի մեջ մոտ Ճ (100) գիրք կար՝ չհաշվելով մյուս բոլոր ապրանքները, որեւէ բան ընդհանրապես դուրս չեկավ [ծովից], եւ միայն սրբալույս մյուռոնը գտանք ու վերցնելով այն՝ մեծ ցնծությամբ եւ բազում ուրախությամբ գնացինք, բայց մեր ուր մեկնելը չգիտեինք:

Եվ ապա Խ (40) օր անմարդաբնակ ջունգլիներում եւ ծովեզերքին այստեղ-այնտեղ շրջում էինք. եւ շատ անգամներ մարդ էինք փնտրում, որ ճանապարհ հարցնենք եւ գնանք մի բնակավայր, սակայն չեղավ հնար, եւ չկարողացանք գտնել որեւէ մի շինության ճանապարհ, քանզի մի կողմում ծովն էր, իսկ մյուս կողմում՝ ծովի դիմաց, սաստիկ խիտ ծառերով անտառ էր եւ ճահճուտ: Նաեւ գազանաբնակ էր այդ անտառը, եւ ամենեւին ճամփա չկար, իսկ մյուս Բ (2) կողմերում մեծ անդնդախոր գետեր էին, եւ մենք ծովեզրի շուրջ Բ (2) օրվա ճանապարհ գնացինք, մի փոքր գետ կար, անցանք եւ ապա պատահեցինք մի անդնդախոր գետի, որը ծովն էր մտնում՝ խառնվելով [ծովին]: Եվ այնտեղ Բ (2) օր մնացինք՝ չկարողանալով այդ գետն անցնել: Եվ մի գիշեր՝ երեկոյան, երբ մի ժամ գիշերից անցել էր, հանկարծակի մեր մեջ եկան Բ (2) կատաղի առյուծ գազաններ, Դ (4) մարդ հափշտակելով՝ տարան եւ պատառ-պատառ արեցին, իսկ մենք՝ մնացածներս, մեզ վայ տալով, լալով հետ փախանք եւ անցանք փոքր գետը, որն սկզբում անցել էինք: Եվ իրար ձեռք բռնած փախուստի դիմեցինք, որպեսզի չկորցնենք միմյանց, քանզի սաստիկ մթին գիշեր էր: Եվ այդպես հեռանալով գազանաբնակ վայրից եւ ուրիշ տեղ գնալով՝ հանգիստ գտանք: Եվ ԺԵ (15) օր անցնելուց հետո, սույն գազանների պատուհասից իբր զերծ մնալով, միամտացել էինք, երբ մի գիշեր, երբ դեռեւս արթուն էինք, կրկին հանկարծակի եկավ եւ գաղտագողի [հարձակվեց] նույն կատաղի, անօրեն առյուծ գազանը եւ մեզանից մեկին հափշտակելով՝ տարավ: Եվ այնտեղից նույնպես կեսգիշերին սրտադող փախուստի դիմելով՝ մի ժամ գնացինք եւ ապա ծովեզերքին դողալով՝ նստեցինք մինչ առավոտ: Իսկ առավոտի լույսը բացվելուն պես այն նույն տեղում, որտեղ սրբալույս մյուռոնն էինք գտել, կանգ առանք եւ մնացինք ԺԵ (15) օր: Եվ Տիրոջ շնորհիվ այստեղ չեկավ այն պիղծ գազանը, թեպետ մենք բազում ահ եւ երկյուղ կրեցինք դողալով: Եվ այնտեղ՝ ծովին մոտ, առանձին աճած Ժ (10) ծառ կար՝ ջունգլիից մեկ ժամ հեռավորությամբ, որի պատճառով մենք, երկյուղելով գազան[ներ]ից, երեկոյան շուտ բարձրանում էինք ծառերը եւ ողջ գիշեր մնում մինչեւ արեւի ծագելը եւ ապա իջնում էինք ծառերից: Այս տեղը գազանաբնակ վայրից հեռու էր մեկ օրվա ճանապարհով: Եվ որովհետեւ այն կատաղի գազանը գիշերը դարան մտած եւ գաղտագողի գալիս էր մեզ հափշտակելու, ուստի ծառերը ելնելով՝ անվնաս էինք մնում գազանից: Եվ այնտեղ Աստված մեզ երեք զարմանալի բարերարություն եւ խնամք արեց. նախ՝ գերահրաշ սրբալույս մյուռոնն այնտեղ գտանք: Երկրորդ՝ բազում տեղեր փոխելով եւ փախչելով գազանների ձեռքից՝ վերջին ապաստանն այնտեղ գտանք, երբ ծառերը ելնելով անվնաս մնացինք գազաններից: Երրորդ՝ բազում մահառիթ վտանգներից հետո այնտեղ ազատություն գտանք մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհիվ եւ Նրա ողորմությամբ:

Շարունակելի

Առաջաբանը եւ գրաբարից փոխադրությունը՝
Ասատուր ՍԱՐՅԱՆԻ
Բանասիրական գիտ. թեկնածու

ԴՄԻՏՐԻ ԼԻԽԱՉՈՎ

ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ 2022-ի թիվ 19—2023-ի թիվ 6

Նամակ երեսուներկուերորդ
ՀԱՍԿԱՆԱԼ ԱՐՎԵՍՏԸ

[Բ մաս]

Արվեստի նկատմամբ անկեղծությունը դրա ըմբռնման առաջին պայմանն է, բայց առաջին պայմանը դեռ ամենը չէ: Արվեստը հասկանալու համար անհրաժեշտ են նաեւ գիտելիքներ: Արվեստի պատմության, հուշարձանի պատմության վերաբերյալ փաստական եւ այն ստեղծողի մասին կենսագրական տեղեկություններն օգնում են արվեստի գեղագիտական ընկալմանը՝ ազատ թողնելով այն: Դրանք ընթերցողին, դիտողին կամ ունկնդրին չեն պարտադրում ինչ-որ որոշակի գնահատական կամ վերաբերմունք արվեստի գործի նկատմամբ, սակայն, ասես թե «մեկնաբանելով», հեշտացնում են դրա ընկալումը:

Փաստական տեղեկություններն ամենից առաջ անհրաժեշտ են, որ արվեստի գործի ընկալումը կատարվի պատմական տեսանկյունից՝ ներծծված լինի պատմականությամբ, քանզի հուշարձանի նկատմամբ գեղագիտական վերաբերմունքը միշտ էլ պատմական է: Եթե մեր առջեւ ժամանակակից հուշարձան է, ապա ժամանակակիցությունն իսկ պատմության որոշակի պահ է, եւ մենք պետք է իմանանք, որ հուշարձանն ստեղծվել է մեր օրերում: Եթե գիտենք, որ հուշարձանն ստեղծվել է Հին Եգիպտոսում, այդ դրա նկատմամբ ստեղծում է պատմական վերաբերմունք, օգնում է դրա ընկալմանը: Իսկ հինեգիպտական արվեստի առավել խոր ընկալման համար անհրաժեշտ կլինեն նաեւ գիտելիքներ, թե Հին Եգիպտոսի պատմության որ դարաշրջանում է ստեղծվել այս կամ այն հուշարձանը:

Գիտելիքը մեզ համար դռներ է բացում, սակայն դրանցով մենք ինքներս պետք է մտնենք: Եվ հատկապես ցանկանում եմ ընդգծել մանրամասների կարեւորությունը: Երբեմն մանրուքը մեզ թույլ է տալիս թափանցել գլխավորի մեջ: Որքա՜ն կարեւոր է իմանալը, թե ինչու է գրվել կամ նկարվել այս կամ այն բանը:

Մի անգամ Էրմիտաժում տեղի ունեցավ ԺԸ դարավերջին—ԺԹ դարասկզբին Ռուսաստանում աշխատող, Պավլովսկի այգիների գեղազարդիչ ու կառուցող Պիետրո Գոնզագոյի (1751—1831 թթ.) ցուցահանդեսը: Նրա՝ գլխավորապես ճարտարապետական թեմաներով նկարներն ապշեցուցիչ են հեռապատկերի կառուցման գեղեցկությամբ: Նա նույնիսկ ցուցադրում է իր հմտությունը՝ ընդգծելով բոլոր գծերը՝ բնականից հորիզոնական, սակայն նկարում՝ հորիզոնում հատվող, ինչպես եւ դա պետք է լինի հեռապատկեր կառուցելիս: Որքա՜ն հորիզոնական այսպիսի գծեր ունի բնականից: Քիվեր, տանիքներ:

Եվ ամեն տեղ հորիզոնական գծերը մի փոքր ավելի հաստ են արված, քան հարկն է, իսկ որոշ գծեր դուրս են գալիս «անհրաժեշտության» սահմաններից, այն բանի սահմաններից, ինչ բնական է:

Բայց ահա եւս մի զարմանալի բան. Գոնզագոյի բոլոր այս հրաշալի հեռապատկերների դիտման կետը կարծես թե միշտ ընտրված լինի ներքեւից: Ինչո՞ւ: Չէ՞ որ դիտողը նկարն ուղիղ իր դիմաց է պահում: Այո՛, քանի որ սրանք բոլորը թատերական գեղազարդիչի ուրվապատկերներ են՝ գեղազարդիչի նկարներ, իսկ թատրոնում հանդիսատեսի դահլիճը (ամեն դեպքում «ամենակարեւոր» այցելուների համար նախատեսված տեղերը) ներքեւում է, եւ Գոնզագոն իր հորինվածքների հասցեատեր է նկատում պարտերում նստած հանդիսատեսին:

Դա պետք է իմանալ:

Արվեստի գործերը հասկանալու համար միշտ անհրաժեշտ է իմանալ ստեղծագործության հանգամանքները, նպատակները, նկարչի անհատականությունը եւ դարաշրջանը: Արվեստը չի կարելի «բռնել» մերկ ձեռքերով: Դիտողը, ունկնդիրը, ընթերցողը պետք է «զինված» լինեն՝ զինված գիտելիքներով, տեղեկություններով: Ահա թե ինչու այդքան կարեւոր նշանակություն ունեն ներածական հոդվածները, մեկնաբանությունները եւ ընդհանրապես արվեստի, գրականության, երաժշտության վերաբերյալ աշխատությունները:

Զինվե՛ք գիտելիքներով: Իզուր չի ասվում՝ գիտելիքն ուժ է: Սակայն դա ուժ է ոչ միայն գիտության, այլ ուժ է նաեւ արվեստի մեջ: Արվեստն անհասանելի է անուժին:

Գիտելիքի զենքը խաղաղ զենք է:

Եթե մինչեւ վերջ հասկանաք ժողովրդական արվեստը եւ չնայեք դրան որպես «պարզունակի», ապա այն կարող է ելակետ ծառայել ցանկացած արվեստ հասկանալու համար՝ որպես ինչ-որ մի ուրախություն, ինքնակա արժեք, անկախություն արվեստի ընկալմանը խանգարող զանազան պահանջներից (ինչպես օրինակ՝ առաջին հերթին անվերապահ «նմանության» պահանջը): Ժողովրդական ստեղծագործությունը սովորեցնում է հասկանալ արվեստի պայմանականությունը:

Ինչո՞ւ է այդպես: Ինչո՞ւ է, այնուամենայնիվ, հենց ժողովրդական արվեստը ելակետային եւ ամենալավ ուսուցիչը: Որովհետեւ ժողովրդական արվեստում մարմնավորվել է հազարամյակների փորձը: Մարդկանց «քաղաքակիրթի» եւ «ոչ քաղաքակիրթի» բաժանումը հաճախ պայմանավորված է ծայրահեղ մեծամտությամբ եւ «քաղաքաբնակների» անձնական գերագնահատմամբ: Գյուղացիներն ունեն իրենց բարդ մշակույթը, որն արտահայտվում է ոչ միայն զարմանալի բանահյուսության մեջ (համեմատեք թեկուզ հենց իր բովանդակությամբ խորունկ ռուսական ավանդական գյուղացիական երգը), ոչ միայն ժողովրդական արվեստում եւ հյուսիսում ժողովրդական փայտյա ճարտարապետության մեջ, այլեւ բարդ կենցաղում, քաղաքավարության գյուղացիական բարդ կանոններում, ռուսական հարսանեկան գեղեցիկ արարողակարգի մեջ, հյուրեր ընդունելու արարողակարգի մեջ, գյուղացիական ընդհանուր ընտանեկան ճաշի, աշխատանքային բարդ սովորույթների եւ տոնակատարությունների մեջ:

Սովորույթներն իզուր չեն ձեւավորվում: Դրանք նույնպես դարավոր ընտրության արդյունք են ըստ իրենց նպատակահարմարության, իսկ ժողովրդի արվեստն ընտրություն է ըստ գեղեցկության: Դա չի նշանակում, որ ավանդական ձեւերը միշտ լավագույնն են, եւ միշտ պետք է դրանց հետեւել: Անհրաժեշտ է ձգտել նորին՝ գեղարվեստական հայտնագործություններին (ավանդական ձեւերը նույնպես իրենց ժամանակին հայտնագործություններ են եղել), սակայն նորը պետք է ստեղծվի նախկինի, ավանդականի հաշվի առնմամբ՝ որպես վերջնարդյունք, այլ ոչ թե որպես հնի ու ամբարվածի չեղարկում:



* * *

Ժողովրդական արվեստը շատ բան է տալիս քանդակագործությունը հասկանալու համար: Նյութի, նրա ծանրության, խտության, ձեւի գեղեցկության զգացողությունը հստակ տեսանելի է գեղջկական փայտյա սպասքի մեջ. փայտե փորագրված աղամաններում, թռչնակերպ շերեփ-թասերում, որոնք դրվում էին գեղջկական տոնական սեղանին: Ի. Յ. Բոգուսլավսկայան իր «Հյուսիսային գանձեր» գրքում գրում է բադի ձեւով պատրաստված շերեփ-թասերի եւ աղամանների մասին. «Լողացող, վսեմորեն հանդարտ հպարտ թռչունի կերպարանքը զարդարում էր սեղանը, խնջույքը համակում ժողովրդական ավանդությունների քնարերգական ոգով: Վարպետների բազում սերունդներ ստեղծեցին այդ առարկաների կատարյալ ձեւը՝ քանդակագործական կերտարվեստական տեսքը համատեղելով հարմարավետ տարողունակ թասի հետ: Սահուն ուրվագծերը, ստվերապատկերի ալիքաձեւ գծերը կարծես ընդունել են ջրի շարժման դանդաղ կշռույթը (ռիթմը): Այսպես՝ իրական նախապատկերը շնչավորել է կենցաղային առարկան՝ համոզիչ արտահայտչականություն տվել պայմանական ձեւին: Դեռեւս հնում այն հաստատվել է որպես ռուսական սպասքի ազգային տեսակ» (*И. Я. Богуславская,* Северные сокровища, Архангельск, 1980, с. 10—11):

Ժողովրդական արվեստի ստեղծագործությունների ձեւը ժամանակի ընթացքում գեղարվեստորեն հղկված ձեւ է: Այդպիսի հղկվածություն ունեն նաեւ գյուղական հյուսիսային խրճիթների տանիքների ձիուկները: Իզուր չէ, որ այդ «ձիերին» խորհրդային գրող, մեր ժամանակակից Ֆյոդոր Աբրամովը (1920—1983 թթ.) դարձրել է իր հրաշալի ստեղծագործություններից մեկի («Փայտե ձիեր») խորհրդանիշը:

Ի՞նչ են այս «ձիերը»: Գյուղական խրճիթների տանիքներին՝ տանիքի տախտակների ծայրերը սեղմելու, դրանց դիմացկունություն հաղորդելու համար, դրվում էր հսկայական ծանր գերան: Այդ գերանը մի ծայրում ուներ ամբողջական արմ, որից կացնով քանդակվում էին ձիու գլուխն ու հզոր կուրծքը: Այդ ձին դուրս էր ցցված ճակտոնի վերեւից եւ կարծես թե ընտանեկան կյանքի խորհրդանիշն էր խրճիթում: Եվ ինչպիսի՜ հիանալի ձեւ ուներ այդ ձին: Նրանում միաժամանակ զգացվում էր նյութի հզորությունը, որից այն պատրաստված էր՝ բազմամյա, դանդաղ աճող ծառի, եւ ձիու վեհությունը, նրա իշխանությունը ոչ միայն տան, այլ նաեւ շրջակա տարածության վրա: Հանրահայտ անգլիացի քանդակագործ Հենրի Մուրը (1898—1986 թթ.) կարծես իր կերտարվեստական ուժն ուսանել է այդ ռուսական ձիերից: Հ. Մուրն իր կիսապառկած հզոր կերպարանքները ճեղքում էր մասերի: Ինչո՞ւ: Դրանով նա ընդգծում էր դրանց վիթխարակերտությունը, ուժը, ծանրությունը: Եվ նույնն էլ կատարվում էր հյուսիսային ռուսական խրճիթների փայտե ձիերի պարագայում: Գերանի վրա առաջանում էին խոր ճաքեր: Ճաքեր կային դեռեւս մինչ գերանին կացնի դիպչելը, բայց դա չէր վրդովում հյուսիսային քանդակագործներին: Նրանք վարժվել էին «նյութի այդ ճեղքմանը»: Քանզի առանց ճաքերի չէին լինում թե՛ խրճիթների գերանները, թե՛ փայտե քանդակված զարդաճաղերը: Այսպես ժողովրդական քանդակագործությունը սովորեցնում է հասկանալ ժամանակակից քանդակագործության բարդագույն գեղագիտական սկզբունքները:

Ժողովրդական արվեստը ոչ միայն սովորեցնում է, այլ նաեւ ժամանակակից գեղարվեստական բազմաթիվ ստեղծագործությունների հիմքն է:

Իր ստեղծագործության վաղ շրջանում Մարկ Շագալը (1887—1985 թթ.) հիմնվում էր բելառուսական ժողովրդական արվեստի վրա. նրա գունագեղ սկզբունքների եւ հորինվածքի ոճաձեւերի, այդ հորինվածքների կենսուրախ բովանդակության, որոնցում ուրախությունն արտահայտվում է մարդու թռիչքի մեջ, տնակները խաղալիք են թվում, ու երազանքը համակցվում է իրականության հետ: Նրա վառ ու խայտաբղետ գեղանկարչության մեջ գերիշխում են ժողովրդի սիրած կարմրի, վառ կապույտի գունային նրբերանգները, իսկ ձիերն ու կովերը դիտողին նայում են մարդկային տխուր աչքերով: Նույնիսկ երկարատեւ կյանքն Արեւմուտքում չկարողացավ պոկել նրա արվեստը բելառուսական ժողովրդական այդ ակունքներից:

Կավե Վյատկա կամ հյուսիսային ատաղձագործական փայտե խաղալիքները սովորեցնում են հասկանալ գեղանկարչության ու քանդակագործության բազմաթիվ բարդ ստեղծագործություններ:

Հռչակավոր ֆրանսիացի ճարտարապետ Լը Կորբյուզիեն (1887—1965 թթ.), իր իսկ խոստովանությամբ, իր ճարտարապետական ոճաձեւերից շատերը փոխառել է Օխրիդ քաղաքի ժողովրդական ճարտարապետության ձեւերից. մասնավորապես հենց այնտեղից է նա քաղել հարկերի անկախ տեղադրման եղանակները: Վերին հարկը մի փոքր կողքի է տեղակայված ներքեւինի նկատմամբ, որպեսզի նրա պատուհաններից գերազանց տեսարան բացվի դեպի փողոց, լեռներ կամ լիճ:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը՝
Տ. Անդրեաս վրդ. ԵՋԵԿՅԱՆԻ



Անիրավ տնտեսի առակը

Սկիզբը՝ թիվ 6

Վակիրճ անդրադառնանք Անիրավ տնտեսի առակի բովանդակությանը: Առակի դիպաշարը հետեւյալն է. «Մի մեծահարուստ մարդ կար, որ մի տնտես ուներ. եւ նրա մասին ամբաստանություն եղավ, որպես թե վատնում է իր տիրոջ ունեցվածքը: Տերը կանչեց նրան եւ ասաց. «Այս ի՞նչ եմ լսում քո մասին, տո՛ւր քո տնտեսության հաշիվը, որովհետեւ այլեւս տնտես լինել չես կարող» (Ղուկ. ԺԶ 1–2):

Միջնորդներն այն ժամանակ խոցելի էին. սիրված եւ հարգված չէին, քանի որ նրանք էին հավաքում տանտերերի տուրքը, որը ներառում էր նաեւ իրենց համար բաժնեմաս: Նրանք նաեւ կարող էին կասկած ու դժգոհություն արթնացնել իրենց տերերի սրտում, եթե հանկարծ զորեղ կամ հարուստ երեւային: Ավելին՝ գյուղացիները, որոնք պայքարում էին գոյատեւելու համար, կարող էին վեճ գցել ունեցվածքի կառավարչի (տնտեսի) ու տիրոջ միջեւ՝ իրենց դրությունը խորամանկությամբ բարելավելու համար: Ուստի այն, ինչ արտացոլված է Հիսուսի պատմած առակում, մի կողմից ենթադրում է տնտեսի վրա դաժան ճնշում, մյուս կողմից՝ պարտապանների գոյատեւման պայքար:

Նմանօրինակ աշխարհում զարմանալի որեւէ բան չկա այն «արդարության» մեջ, որով վերաբերվում են մեղադրյալ տնտեսին. նա պետք է հանձնի իր հաշվապահական մատյաններն ու կարճ ժամանակ անց հեռանա աշխատանքից: Տնտեսի պատասխանը ցույց է տալիս իր առջեւ ծառացած խնդրի բարդությունը, մի բան, որն առակի ժամանակակից ընթերցողներից շատերն ընդհանուր առմամբ շրջանցում են: Տնտեսը մտքում ասում է. «Ի՞նչ պետք է անեմ, քանի որ իմ տերը տնտեսությունս ինձնից վերցնում է. հողի վրա աշխատել չեմ կարող, մուրալ ամաչում եմ» (Ղուկ. ԺԶ 3):

Նախ նշենք, որ հող էին մշակում եւ մուրացկանություն էին անում նրանք, ովքեր վռնդվել էին ընտանեկան կալվածքից: Որպես նախկին պաշտոնյա՝ տնտեսը չէր կարող աշխատանքի համար մրցակցել նրանց հետ, ովքեր իրենց ողջ կյանքում հող էին մշակել, իսկ ահա մուրացկանությունից նրա խորշելը չպետք է դիտարկել որպես մեղսալի հպարտություն, այլ առավելապես արժանապատվության կորստի մտավախություն. վիճակ, որին կարող էին հասցնել աղքատությունը, հիվանդությունն ու մոտալուտ մահվան վտանգը (հմմտ. Ղուկ. ԺԶ 20–22): Ուստի բնավ պատահական չէ, որ նրա ողբը՝ «Ի՞նչ անեմ....», ունի հուսահատության հստակ հնչերանգ:

«Գիտեմ, թե ինչ պիտի անեմ, որպեսզի, երբ տնտեսությունից հեռացվեմ, ընդունեն ինձ իրենց տները»: Եվ իր տիրոջ պարտապաններից յուրաքանչյուրին մեկ առ մեկ իր մոտ կանչելով՝ առաջինին ասում է՝ «Իմ տիրոջը ինչքա՞ն պարտք ունես»: Եվ սա ասում է՝ «Հարյուր տակառիկ ձեթ». եւ տնտեսը նրան ասում է՝ «Ա՛ռ քո մուրհակը եւ նստի՛ր ու անմիջապես գրի՛ր՝ հիսուն»: Ապա դարձյալ մյուսին ասում է՝ «Դու ինչքա՞ն պարտք ունես», եւ սա ասաց՝ «Հինգ հարյուր պարկ ցորեն»: Տնտեսը նրան ասաց՝ «Ա՛ռ քո մուրհակը եւ նստի՛ր ու գրի՛ր՝ չորս հարյուր»: Եվ տերը գովեց անիրավ տնտեսին, որովհետեւ հնարամտությամբ գործեց, քանի որ այս աշխարհի որդիներն ավելի հնարամիտ են, քան լույսի որդիներն իրենց սերնդի մեջ: Եվ Ես ձեզ ասում եմ. անիրավ մամոնայից ձեզ համար բարեկամներ արեք, որպեսզի, երբ այն պակասի, հավիտենական հարկերի տակ ընդունեն ձեզ» (Ղուկ. ԺԶ 4–9):

Տնտեսի գործողությունները հավանաբար պետք է հասկանալ այն շարակարգում, որ կալվածքների սեփականատերերն օգտագործում էին առեւտրականներին՝ իրենց ապրանքները վաճառելու համար: Այն փաստը, որ տնտեսի տիրոջ պարտապանները կարող էին գրի առնել իրենց պարտքերի չափը, հուշում է՝ ավելի հավանական է, որ նրանք վաճառականներ էին, քան հասարակ գյուղացիներ:

Այդ առեւտրականներն ստանում էին մեծ կալվածքների արդյունքի ավելցուկը եւ հողատերերին խոստանում վաճառվածի դրամական վերադարձ: Խոստացվածը, սակայն, ոչ միայն ապրանքի գինն էր վաճառքի պահին, այլ նաեւ ներառում էր թաքնված տոկոսադրույք, ինչը ծածուկ էր պահվում վաշխառության հրեական արգելքի պատճառով:

Ինչպես լավագույնս նկարագրվում է առակում, տնտեսը, որի գործն էր վաճառականների հետ բանակցելն իր հարուստ գործատուի անունից, գաղտնի փոխում է այդ պարտապան-վաճառականների հետ պայմանագրերն այնպես, որ չեղյալ համարի իր տիրոջը պատկանող թաքնված տոկոսները:

Այդպիսով՝ հնարամիտ տնտեսն իր հետ գործակցող առեւտրականներին առավել մեծ հնարավորություն կընձեռեր շահելու, քանի որ նրանք կարող էին իրենց պահել տոկոսային մասը կամ ստանալ սեփական բաժինը:

Այս առակի մեկնության տարբերակներից որեւէ մեկը միանշանակ ընտրելը դյուրին չէ, քանի որ դրանք երբեմն շփոթեցնող են, սակայն ընդհանուր պատկերացում կազմելու համար կարեւոր է գիտենալ հետեւյալը: Վաղ շրջանի թարգմանիչներն այս առակը հաճախ ընդունում էին որպես ողորմության փաստարկ: Այն առավել քիչ էր այլաբանվում, քան մյուս առակները, սակայն հետագա մեկնություններում այլաբանությունն առավել ընդունելի դարձավ:

Անիրավ տնտեսի առակի մեկնության ավանդական տեսակետն այն է, որ տնտեսի հնարամտությունը գովաբանվում է հատկապես գումարը ճիշտ օգտագործելու, այլ ոչ թե այն անազնվորեն վատնելու համար: Հիսուս այս առակի միջոցով ընդգծում է, որ Իր թագավորության գալուստը փոխում է նյութական միջոցների օգտագործման վերաբերյալ մարդու որոշումները:

Անիրավ տնտեսի առակի ընկալման տեսանկյունից կարեւոր է քրիստոնեական մոտեցման քննությունը: Ըստ այսմ՝ մեծահարուստը զայրանալու փոխարեն հիանում է տնտեսի հնարագիտությամբ եւ գովասանքի արժանացնում նրան: Առակի ողջ իմաստն այս վերջին արտահայտության մեջ է. «Եվ տերը գովեց անիրաավ տնտեսին....» (Ղուկ. ԺԶ 8): Այստեղ, սակայն, գովաբանվում է ոչ թե տնտեսի սխալ անելը, այլ գործելակերպը:

Առակի բանալին 8-րդ համարում է, որտեղ ասվում է. «....որովհետեւ այս աշխարհի որդիներն ավելի հնարամիտ են, քան լույսի որդիներն իրենց սերնդի մեջ» (Ղուկ. ԺԶ 8): Լույսի որդիները հրեշտակներն են, քանի որ լույսից արարվեցին, աշխարհի որդիները՝ մարդիկ: Մարդկանց առավել իմաստուն է կոչում, քան հրեշտակներին, քանզի մարդիկ փառքից զրկվելուց եւ Աստծուց օտարանալուց հետո հնար գտան ապաշխարությամբ փնտրելու եւ մոտենալու Նրան, իսկ հրեշտակների դասերից շեղվածներն առավել չարացան եւ չիմացան, որ Նա, Ով մեղքի պատճառով իրենց բարձրյալից վայր է գցել, զորություն ունի նաեւ վերադարձնելու եւ դատելու:

Շարունակելի

ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ներսէս վարդապետ Դանիէլեանց

Ահաւոր գիշերը (Ալագ ուրբաթ)

Խորհրդաւոր են ու յղի գիշերները լռին, անոնց ծնունդը երկւորեակ է՝ կեանք ու մահ: Կան գիշերներ, որ առաւօտ ու արեւ ունին, կեանքի գիշերներն են անոնք: Գիշերներ ալ կան, սեւ ու աղջամղջին գիշերներ, ա՜հ, անոնք անլոյս եւ անյոյս գիշերներն են գերեզմանին, անառաւօտ եւ անարեւ, յաւիտենական գիշերները մահուան:

Գիշերները սիրելի են, սակայն մեր խոնջած, պարտասած (իմա՛ հոգնած, թուլացած) մարմինները գիշերուան մէջն է, որ իրենց կորուսած ուժերը կը վերստանան, անոնք մեր մտքի փոթորկուն ծովին նաւահանգիստներն են անգայթ, յենակէտը մեր սրտերու մշտածուփ յուզմանց: Բայց քունը՝ այդ գիշերներու պահապան հոգին, չմոտենար արցունքներով թրջոտած բիբերու, չսիրեր այն սրտերը, ուր հիւծող վիշտն իր բոյնն է դրած. ինչո՞ւ կը հեռանայ այն մտքերէն, ուր մտմտուքի ցեցն իր աւերիչ դերը կը կատարէ: Գիշերներն այսպէս՝ թերեւս մէկուն համար կեանք ու հանգիստ է, մինչ ուրիշի մը համար ցաւերու սկիզբն ու կարապետը մահուան:

Ո՞րն էր այն ահաւոր գիշերը, զոր անցուց մարդոց որդիներէն մէկը, որուն գիշերը թէեւ ծնաւ մահ մը, սակայն մահն ալ ծնաւ կեանքը:

Ա

Սարսափ ազդող մութ գիշերուն խոր լռութեանը մէջ, բուերու սրտակեղեք սուր վայնասուններու նման, կը լսուի միայն տխուր սօսաւիւնը խօլական հիւսիսին, որ կարծես մօտալուտ մահուան մը ողբերգը կը հիւսէ՝ աղմկելով շարունակ խիտ անտառակը մշտադալար ձիթենիներուն:

Ի՜նչ ալ սեւաթոյր տխրութիւն մը կը հագնին սա անլուսին ու անլոյս գիշերները, ու նոյն միջոցին գոգցես մեծ ու փոքր աստղերն ալ անքանակ՝ երկնքի անծիր անհունութեանը ծոցէն բուռն ճիգ մը կ՚ընեն իրենց գոյութիւնը ցոյց տալու համար մեզ: Հետզհետէ աւելի ահաւոր կը դառնայ գիշերներու գիշերը՝ թխպոտ ամպերու լեռնանման հսկայ կոյտերը վե՛ր վե՛ր կը բարձրանան հորիզոնէն, ու հովը մոլեգին՝ գիսախռիւ ուրուականի մը պէս իր հապճեպ մատուլներով կարծես կը ջանայ լայն ու սեւ պատանք մը ձեւել՝ ցաւերու էն զօրաւոր կսկիծներովը բռնուած սա ձիթենեաց անտառակին, որուն լացող ծառերը ծածկել ու պահել կ՚ուզեն կարծես իրենց ծոցը ապաստանած նոյն գիշերուան մեծ *հալածականը*, որ իր անձին մէջը կզգայ տրտմութիւններու էն սոսկալի սարսուռն ու մահուան քստմնելի սարսափը հոգեքաղ, ու սօսաւիւնը դեռ փչող խօլական հիւսիսին կը փշաքաղէ անոր մարմինն ամբողջ:

Ո՞վ է արդեօք այս մարդը, ոճրագո՞ր մը, որ իր հետքը ծածկել կ՚ուզէ, կամ Երիքովի ճամբո՞ւրդն է, որ օգնութեան կսպասէ. ո՛չ մէկն է եւ ո՛չ միւսը, իր ճակտին վրայ հետզհետէ կ՚երեւին տագնապի կնճիռները ստուերոտ, աչքերը մոլորուն յառած է դէպ ի հորիզոնը՝ բուռն անձկութեամբ օգնութիւն սպասող մէկու մը պէս. ոչ ոք ունի, սակայն, իր մօտն ու հեռուն, իրենները վաղո՛ւց լքած են զինքը՝ հակառակ այն խոստումներուն, թէ՝ մինչեւ իսկ պատրաստ են իր հետը մեռնելու (հմմտ. Մատթ. ԻԶ 35, Յովհ. ԺԳ 37). ա՜հ, ո՛րքան տկար է տագնապի պահուն մարդուն հոգեկան զգացումը, երբ կատարեալ սէրը դեռ չէ զօրացուցած զայն, մանաւանդ այն սէրը, որ հզօր է, քան զմահ: Իրերը նոյնը չեն մնար սակայն, եւ ոչ ալ գիշերը մթին. Սարոնի սարէն լուսնկան կերեւի, թէեւ ոչ նախորդ գիշերուան պայծառութեամբը. ան ալ սարսուռի տժգունութիւն մըն է հագեր, եւ իր տմոյն ճաճանչներ կը բեկբեկին մահուան ստուերներու տակ ծանրացած սա ձիթենիներու մանրիկ տերեւներու մէջէն, որ դեռ խօլական հովը կ՚ալեկոծէ՝ ինչպէս ալիքները ծովին: Ու դեռ *հալածական մարդն* անշարժ կեցեր է իր տեղիկը՝ մամռապատ ժայռի մը կուշտին վրայ ծնրադիր ու անյարիր, որուն պայծառ դէմքին վրայ կարծես կ՚ուրուագծուին մահապարտներու կոշտ փայտին ստուերներն ահարկու. հովը կատաղի՝ արդէն ցրուած թուխպ ամպերը հորիզոնին, ձիթենեաց մէջէն լուսնի լոյսը ցոյց տալ կը փորձէ Անոր տամկացած աչքերուն, որ միայն ինքը գիտէ ուղղել երկնքի լուսաւորներուն ընթացքն անմոլար:

Յանկարծ Ան իր շուրջը կը նայի՝ խաչաձեւելով մեզ անծանօթ հորիզոնները հեռաւոր, եւ իր նայուածքները լայն ու խորին՝ կ՚ընդգրկեն ոչ միայն հիւսիսն ու հարաւը, այլ տիեզերքն ամբողջ: Պահ մը կը լռէ բնութիւնը, կը լռեն ձայներն ամէն, վայնասունները հովերուն ու խարշափիւնը ձիթենեաց տերեւներուն, ու հալածական Աստուած մարդուն ձայնն է, որ միայն կը լսուի, իր աչքերը սեւեռուն հսկայ լեռներու երեւոյթը ունեցող ամպերու ծոցէն, կը տեսնէ դէպ ի իրեն երկնցած գաւաթ մը. ա՜հ, որքա՜ն դառն է այն, դառն է, վասնզի մարդկութեան հոգեկան ցաւերու բաժակն է, քաղցր է միանգամայն վասնզի մեղաւորաց փրկութեան սիրոյ գաւաթն է այն: Մոլեգնեալ ամբոխը խուժդուժ արդէն ձերբակալած է զայն՝ իբր չարագործ մը եւ կը տանի այն ատեանը, ուր մարդը կրնայ դատել միայն եւ ոչ արդարը:

Շարունակելի

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Արփինե Չանթիկյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 21.04.2023 թ.
Տպաքանակը՝ 1265